12 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 152(5235)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Ինչպես շարունակել ինտեգրման գործընթացները բոլոր ուղղություններով՝ ահա խնդիրը

**Մ. Խ.**

Երեկ պատգամավորների հարցերի կիզակետում էր հայտնվել արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը: Նախ նախկին արտգործնախարար **Ալեքսանդր Արզումանյանն** էր կառավարության նոր ծրագիր ուզում, թե՝ առկա ծրագրում ԵՄ-ի եւ ՀԱՊԿ-ի հետ Հայաստանի համագործակցության մասին գրված է, իսկ Մաքսային միության հետ՝ ոչ, եւ ուրեմն Մաքսային եւ Եվրասիական միությունների հետ համագործակցելու մանդատ խորհրդարանից կառավարությունը չունի. կամ ծրագիր, կամ հրաժարական, ուրեմն: Ըստ **Է. Նալբանդյանի**՝ Շանհայի համաձայնագրով Մաքսային միությանը որպես դիտորդ Հայաստանի անդամակցության մասին է եղել լոկ խոսքը, իսկ ահա հետագա զարգացումները տարել են անդամակցության: Իսկ կառավարության ծրագիրը հետագայում կուղղվի: Իսկ որ Լեռնային Ղարաբաղի ազատագրական պայքարը Շանհայի պայմանագրի անդամ միջինասիական երկրները անջատողականություն են համարում, ըստ Նալբանդյանի՝ Շանհայի Շոս պայմանագրով ԼՂ դեմ ոչ մի որոշում չկա, ու նույնիսկ Ադրբեջանն է այդ կազմակերպությունում դիտորդ դառնալու խնդրանք ներկայացրել:



Այնուհետեւ **Ռուբիկ Հակոբյանը** Մաքսային միությանն անդամակցելու որոշում կայացնողներին 1-3 պաշտոնյաների քաղաքական «կլուբ» անվանեց, որն անտեսում է ժողովրդի ձայնը եւ հետաքրքրվեց, թե Վիլնյուսում ի՞նչ է սպասվում, ե՞րբ կհրապարակվի Ասոցիացման համաձայնագրի տեքստը:

*Տես էջ 2*

# Գազի գինն ու Մաքսային միությունը

**Երեկ, էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը, Ազգային ժողով-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ պատասխանելով ՀՀԿ-ից Լեւոն Մարտիրոսյանի, իսկ ԱԺ միջանցքում՝ լրագրողների հարցերին, Հայաստան մուտք գործող ռուսական գազի գնի հետ կապված հետաքրքրական մանրամասներ հաղորդեց: Երբ Հայաստանը միանա Մաքսային միությանը, գազի գինը հաշվարկվելու է 1000 խմ գազի դիմաց 189 դոլար: Սա այն գինն է, որ ստացվել է գազը թանկացումից հետո 30 տոկոսով սուբսիդավորելու վերաբերյալ հայկական եւ ռուսական կողմերի բանակցությունների ընթացքում: Այդ բանակցությունները եղել են մինչեւ այն պահը, երբ որոշվել է միանալ Մաքսային միությանը: Այս պահին գազի մուտքը սահմանի վրա ֆիքսված է 1000 խմ-ը 270 դոլարով: Իսկ մինչեւ Մաքսային միություն մուտք գործելը ՌԴ Պետդուման պետք է որոշում ընդունի 30 տոկոս սուբսիդավորման վերաբերյալ, ու այս պահին հայթայթվում են սուբսիդավորման համար անհրաժեշտ գումարները: Իսկ Մաքսային միությանն անդամակցելը նախարարը դրական է համարում, հատկապես էներգակիրների՝ Ռուսաստանից ներկրվելու հանգամանքը նկատի ունենալով:**

**Մ. Խ.**

# Օբամայի հեռուստաելույթը նվիրված էր Սիրիային

*ՄԱԿ-ի ԱԽ-ին կներկայացվի նոր բանաձեւ*

ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման սեպտեմբերի 11-ին հանդես է եկել ազգին ուղղված հեռուստաելույթով, որը նվիրված էր Սիրիայի խնդրին:

Նա մասնավորապես հիշեցրել է, որ 1997 թ. Սենատը հաստատեց քիմիական զենքի կիրառումն արգելող միջազգային համաձայնագիրը, որին առ այսօր միացել է 189 պետություն (աշխարհի բնակչության 98 տոկոսը): Օբամայի խոսքերով՝ Սիրիայում օգոստոսի 21-ին քիմիական զենքի օգտագործումը ոչ միայն միջազգային իրավունքի խախտում է, այլեւ սպառնում է ԱՄՆ-ի անվտանգությանը: Ըստ Օբամայի՝ եթե ԱՄՆ-ը պատշաճ կերպով չարձագանքի, ապա Ասադը կարող է կրկին օգտագործել նման զենք:

Նախագահի խոսքերով, եթե հակամարտությունը դուրս գա Սիրիայի սահմաններից, ապա քիմիական զենքը կսպառնա ԱՄՆ-ի դաշնակիցներ Թուրքիային, Հորդանանին եւ Իսրայելին: Ավելին, ԱՄՆ-ի անբավարար խստությունը Ասադի մերձավորագույն դաշնակից Իրանին կդրդի ստեղծել միջուկային զենք:

«Իրավիճակի մանրակրկիտ վերլուծությունից հետո ես որոշեցի, որ ԱՄՆ-ի ազգային անվտանգությունը պահանջում է Ասադի վարչակարգի կողմից քիմիական զենքի կիրառմանն արձագանքել ռազմական հարվածով», ընդգծել է Օբաման:

Նա հավաստիացրել է, որ ամերիկացի զինվորները չեն մտնի Սիրիա, այնպես որ Իրաքի եւ Աֆղանստանի պատերազմների նման ծանր հետեւանքներ Ամերիկայի համար չեն լինի:

«Սիրիայի վրիժառության ձեռնարկումներից չարժե վախենալ, քանի որ Ասադի վարչակարգը չունի պատասխան հարվածներ հասցնելու հնարավորություն», ասել է նախագահը:

Օբաման չի ժխտել, որ Սիրիայում Ասադի վարչակարգի բազմաթիվ հակառակորդներ ծայրահեղականներ են, շատերը կապված են «Ալ Ղաիդայի» հետ: Սակայն «եթե հակամարտությանն այժմ չմիջամտենք, այդ ուժերը կկարողանան օգտվել Սիրիայի հարաճուն քաոսից», ասել է Օբաման:

Այնուհետեւ նա հայտարարել է, որ շարունակում է քննարկել խնդրի խաղաղ լուծման տարբերակները: Սիրիայի քիմիական զենքը միջազգային վերահսկողությանը հանձնելու ՌԴ առաջարկության կապակցությամբ



Օբաման ասել է, որ Ասադի վարչակարգը խոստովանել է Սիրիայում քիմիական զենքի գոյությունը եւ պատրաստակամություն է հայտնել միանալու նման զենքն արգելող միջազգային համաձայնագրին:

Նշելով, որ «դեռ վաղ է խոսել Դամասկոսի մտադրության լրջության» մասին, Օբաման հավելել է, որ ինքն այնուամենայնիվ Կոնգրեսին խնդրել է հետաձգել Սիրիային հարվածելու բանաձեւի քվեարկությունը:

Սիրիայի հետ կապված բանակցությունները շարունակվում են: Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ հինգշաբթի օրը պետքարտուղար Ջոն Քերրին Ժնեւում կբանակցի ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի հետ: Օբաման կշարունակի երկխոսությունը Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի ղեկավարների հետ: Ռուսաստանի եւ Չինաստանի հետ ԱՄՆ-ի խորհրդակցություններից հետո ՄԱԿ-ի ԱԽ-ին կներկայացվի Սիրիային վերաբերող բանաձեւի նոր տարբերակ, որով կպահանջվի այդ երկրի լիակատար «քիմիական զինաթափում»:

**Պ. Ք.**

# Թանկացումների միակ պատճառը մենաշնորհները չեն

«Իրազեկ եւ պաշտպանված սպառող» կազմակերպության նախագահ Բաբկեն Պիպոյանը համարում է, որ Հայաստանում տնտեսությունը ոչ թե առաջընթաց, այլ հետընթաց է ապրում, իսկ տնտեսական աճի մասին վիճակագրական տվյալները, ըստ նրա, վերլուծված չեն ու չեն արտացոլում տնտեսության իրական վիճակը:

Երեկ «Նոյյան տապան» ակումբում Բաբկեն Պիպոյանը նշեց, որ օրենսդրական դաշտում ունենք մարմիններ, որոնք շուկայական թանկացումների պատճառները վերահսկելու համար են, սակայն այս մարմիններն իրականում չեն իրականացնում իրենց ճիշտ գործառույթները:

Բաբկեն Պիպոյանը փաստում է, որ Հայաստանում կարիք կա նաեւ լաբորատոր հագեցածության, քանի որ այսօրվա դրությամբ անգամ հնարավոր չէ որեւէ կերպ տարբերակել տեղական լոլիկը թուրքականից: Եվ չունենալով հանդերձ լաբորատոր բավարար պայմաններ, ըստ բանախոսի, ասում են, թե ունեն եվրոպական չափորոշիչներին համապատասխան ապրանքներ:

Իսկ շուկայական թանկացումները Բաբկեն Պիպոյանը չի կապում միայն մենաշնորհների հետ: Օրինակ՝ կաթնամթերքի թանկացումը պայմանավորված չէ մենաշնորհներով: Ըստ նրա՝ թանկացումների պատճառներից մեկն էլ կամքի ու պրոֆեսիոնալիզմի պակասն է:

Բանախոսը կարծում է, որ գները վերահսկելու համար պետք է ստեղծվի իրական հանձնաժողով, որը գոյություն ունենա ոչ թե զուտ գոյություն ունենալու, այլ իսկապես աշխատելու համար. «Իսկ հիմա մնում է միայն հույսը դնենք հանրային վերահսկողության վրա»:

**Ի. Պ.**

# «Տիզբոն կանչվելու» սինդրոմը

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

Մաքսային միությանը միանալու Հայաստանի նախագահի որոշումը մեծ մասամբ ընկալվեց որպես «Ռուսաստանի բիրտ ճնշման տակ հարկադիր քայլ»: Մեր գիտակցությա՞ն, թե՞ ենթագիտակցության մեջ, չգիտեմ, բայց մի տեղ շա՜տ ամուր է նստած «Տիզբոն կանչվելու» սինդրոմը:




1990 թ.-ի ամռանը Երեւանում աշխատանքն էր սկսել Գերագույն խորհրդի նստաշրջանը, ԼՂ-ից պատգամավոր էի: Ապրում էինք հյուրանոցում, բայց մեկ-մեկ «փախչում»-գնում էի որոջս վարձով տունը, զով-խաղաղ, գրեթե գյուղական բակ էր: Հերթական այցս Լեւոն Տեր-Պետրոսյանի Մոսկվա մեկնելու օրն էր: Տանտիրուհին հարցրեց՝ «ճի՞շտ է, որ Լեւոնին Մոսկվա են կանչել»: Ասացի՝ այո: Նա լարվեց, ապա թե՝ «չտանե՞ն՝ Պապ թագավորի պես սպանեն»:

Դպրոցական տարիներին, ահա, կարդում ենք «Պապ թագավոր»-ն ու տպավորվում, որ հայոց երիտասարդ, եռանդուն, ինքնագլխության միտող թագավորին խարդախ բյուզանդացիները հրավիրեցին ճաշի, սպանեցին, եւ Հայաստանը կորցրեց անկախությունը: Մեզ չեն ասում, որ Պապին դիմադիր էին Ներսես Մեծը, Մուշեղ Մամիկոնյանը, որ բյուզանդացիները չէին համարձակվի նրա երկրում նրա հետ այդքան տմարդի վարվել, եթե համոզված լինեին, որ թագավորի սպանությունը բռնկելու է հակաբյուզանդական ընդվզում հայոց բանակում, նախարարական ամրոցներում, էլ չխոսած համաժողովրդական ապստամբության մասին: Պապի սպանությունը, դժբախտաբար, հայ ավագանին, զորքը, հոգեւորականությունը համարել են «օրինաչափություն»: Իբր՝ «բա ի՞նչ էր կարծում, բյուզանդացիները կներեի՞ն»:

*Տես էջ 4*

# Լրագրողների ուրախություն Սամվել Ալեքսանյանի եւ Փակ շուկայի մասին



Նախկինում նույն ընտրատարածքում մրցակիցներ **Նիկոլ Փաշինյանն** ու **Սամվել Ալեքսանյանը** Ազգային ժողովում էլ ընդհանուր թեմայով «հանդիպելու» առիթներ ունենում են: Երեկ, օրինակ, Ն. Փաշինյանը ԱԺ-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ կրկին հետաքրքրվում էր, թե ինչպե՞ս է, որ մշակույթի նախարարության արգելանքի պարագայում, բայց քաղաքապետարանի ու իրավապահ մարմինների թողտվությամբ հնարավոր դարձավ պատմամշակութային հուշարձան Փակ շուկայի աղավաղումը: Վարչապետը բացակա էր, Ն. Փաշինյանն էլ, ինչպես **Հովիկ Աբրահամյանն** էր առաջարկում, չէր համաձայնում հարցը գրավոր տալ: Ամենահետաքրքականն այն է, որ Փակ շուկայի սեփականատեր համարվող Սամվել Ալեքսանյանը, մինչեւ հարցուպատասխանը, ԱԺ նիստի մեծ ընդմիջմանը ելել էր լրագրողական շրջապատ, ու ի թիվս այլ հարցերի՝ Փակ շուկայի վերաբերյալ էլ դատողություններ էր արել՝ հոտառություն ունի էլ, մարդը: Նա մեկ ասում էր, որ ինքը բիզնեսով չի զբաղվում, Փակ շուկայի մասին պետք է նրա տնօրենին հարցնել, մեկ էլ կրկնում այն խոսքերը, որ նրան պաշտպանող կանայք էին ասել Փակ շուկայի կառուցմանը սատարող գործողություններից մեկի ժամանակ, թե ինքը «զիբիլից, կռիսներից» մաքրել է Փակ շուկան. «Էդ պատմամշակութային արժեքը ես փրկել եմ զիբիլանոցից, կռիսանոցից», ասում էր նա՝ հորդորելով լրագրողներին մենակ վատ բան չգրել, իր լավ գործերն էլ տեսնել: Ու հակադարձում էր, թե «էդքան քանդված եկեղեցի կա, քարերը թափված, ինչո՞ւ չեք գրում՝ փչանում են». «Ոչինչ, մի օր խիղճը կգա, ձեզ կխեղդի, կգրեք ճիշտը»: Հետո մեկ էլ կտրուկ հրաժարվեց ինտերվյու տալ, թե՝ եկեք Մալաթիայի հիվանդանոց, տեսեք ինչ լավ բաներ եմ արել, այնտեղ հարցազրույց տամ (այս հիվանդանոցը եւս նրա սեփականությունն է): «**Ազգի**» հարցին, թե ի՞նչ է մտածում Մաքսային միություն մտնելու մասին, նա նետեց. «Մեր նախագահն ինչ անում է՝ ճիշտ է անում»:

Իմիջիայլոց՝ մի քանի օր հետո «Քարֆուր» առեւտրի կենտրոնի բացմանն Ալեքսանյանը գնալու է, իր խոսքով՝ «լենտն» էլ ինքն է կտրելու: Համասեփականատեր լինելու վերաբերյալ հետաքրքրությանն էլ պատասխանեց՝ եթե առաջարկ լինի, չի մերժի: Լրագրողները չէին թողնում Սամվել Ալեքսանյանից, ու նրանց խաչաձեւ հարցերից նա խիստ դժգոհեց, թե 10 մլն դրամի նվիրատվություն է արել Մալաթիա-Սեբաստիա դպրոցներից մեկին, լրագրող է կանչել՝ չեն գնացել: Ու եզրակացրեց, որ իր մասին ուզում են միայն վատ բան գրել: Եթե բիզնեսով չի զբաղվում՝ որտեղի՞ց 10 մլն, հետաքրքրվեց մի լրագրող. «Էդ քեզ վերաբերվո՞ւմ է՝ որտեղից: Մինչեւ պատգամավոր ըլելը բիզնեսով եմ, չէ՞, զբաղվել, կուտակել եմ», իր ոճով ասաց լրագրողների ուրախություն Սամվել Ալեքսանյանը:

**Մ. Խ.**

# Արդարադատության խորհրդի անդամության նոր թեկնածուները

Երեկ Ազգային ժողովը քննարկում էր Արդարադատության խորհրդի անդամի երկու թափուր տեղերի համար առաջադրված թեկնածությունները: ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը ներկայացրեց առաջադրված թեկնածուներին՝ ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Ղազինյանին եւ Հայաստանի ոստիկանության խորհրդական Գրիգոր Բադիրյանին: Նրանցից առաջինը երեկ ներկայացավ խորհրդարանին եւ պատասխանեց պատգամավորների հարցերին, մյուսի հետ կապված քննարկումը դեռ այսօր կշարունակվի: Այսօր իսկ փակ, գաղտնի քվեարկությամբ հավանաբար նրանք առանց խոչընդոտի կդառնան Արդարադատության խորհրդի անդամներ:

**Մ. Խ.**

# Ինչպես շարունակել ինտեգրման գործընթացները, բոլոր ուղղություններով՝ ահա խնդիրը

*1-ին էջից*

Է. Նալբանդյանն էլ կրկնեց բազմիցս ասածը, թե միջպետական համաձայնագրերը նախաստորագրելուց առաջ չեն հրապարակվում, այլ միայն՝ դրանից հետո, բայց եւ որեւէ գաղտնիք չկա այդ համաձայնագրում: Իսկ Մաքսային միության վերաբերյալ փաստաթղթերը նոյեմբերին այդ վերաբերմամբ բանակցություններից հետո կկազմվեն, եթե երեք անդամները որոշած լինեն ընդունվել Մաքսային միություն: Դրանից հետո փաստաթղթերը կմտնեն ԱԺ՝ վավերացման, եւ խորհրդարանը պետք է եզրակացություններ անի: Ռ. Հակոբյանը զայրացավ՝ այդ բոլորը գիտե, ինքը խոսում է ժողովրդական եւ պառլամենտական դիվանագիտությունը զրո դարձնելու մասին, ժողովրդի կարծիքն անտեսվել է եւ միայն քաղաքական «կլուբն» է որոշում ժողովրդի ճակատագիրը. միջազգային պրատակոլներն իմանալով հանդերձ՝ կան հարցեր, որ պետք է ժողովրդին մատուցել: Նալբանդյանն էլ պնդեց՝ գաղտնի բան չկա, ՀՀ նախագահն ու արտգործնախարարը բազմիցս արտահայտել են իրենց վերաբերմունքը ինտեգրացիոն գործընթացների հանդեպ թե՛ հետխորհրդային տարածքում, թե ԵՄ հետ հարաբերություններում: ԵՄ հետ հարաբերությունները զարգացնել, խորացնել եւ լայնացնել, բայց ոչ ի վնաս Ռուսաստանի հետ Հայաստանի հարաբերությունների, ի վնաս այլ ինտեգրացիոն գործընթացների, սա է եղել ելակետը: Եւ եվրոպական այլ մայրաքաղաքներում եւս ըմբռնում կա գործընկերների մոտ, թե ինչու է Հայաստանն այդ քայլն անում (Մաքսային միություն մտնելու). «Մեր ձգտումն է, որ շարունակենք մերձեցումը Եվրոմիության հետ բոլոր ուղղություններով», ասաց արտգործնախարարը:

# «Սպասումից վեր. պատմություններ թուրք-հայկական սահմանից»

Հինգ օր կշարունակվի Երեւանից հետո Գյումրու Ասլամազյան քույրերի պատկերասրահում սեպտեմբերի 10-ին բացված մուլտիմեդիա ցուցահանդեսը, որը «Սպասումից վեր. պատմություններ թուրք-հայկական սահմանից» խորագիրն է կրում: «Հրանտ Դինք» հիմնադրամը, Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն եւ այլ կազմակերպություններ ներկայացրել են հայ եւ թուրք ռեժիսորների հինգ փաստագրական ֆիլմեր, որոնք պատմում են Կարս եւ Գյումրի սահմանային քաղաքների միջեւ տարիներ ի վեր դադարեցված երկխոսության, բնակավայրերը, մարդկանց ու քաղաքակրթությունները բաժանող փակ սահմանի մասին: Ֆիլմերը նկարահանվել են Նիդեռլանդների Թագավորության գլխավոր հյուպատոսարանի եւ Բրիտանիայի դեսպանատան հովանավորած ծրագրի շրջանակներում:

Ծրագրի նպատակն է ստեղծել բարենպաստ միջավայր թուրք եւ հայ երիտասարդ լուսանկարիչների համատեղ արտադրանքի համար, նպաստել երկու հարեւան երկրների երկխոսությանը:

**Գ. Մ.**

***Ի ՊԱՏԱՍԽԱՆ «ՆՈՐԵԼՈՒԿ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ»***

# Կարեն Կարապետյանի գրասենյակի հայտարարությունը

**Մի երկու նորելուկ լրագրողներ այսօր հանկարծ ու վերստին վերհիշել էին տարիներ առաջվա մի միջադեպ՝ կապված ԱԺ պատգամավոր, այն ժամանակ ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Կարեն Կարապետյանի հետ: Ընդ որում, հիմնականում այն լրատվամիջոցների ներկայացուցիչները (իսկ դրանց թիվը մեծ չէ, հազիվ մի ձեռքի մատներով կարելի է հաշվել), որոնք անցած այս տարիներին պարբերաբար ակնհայտ դիտավորությամբ ու հետեւողականորեն «թարմացրել» են այդ թեման՝ գրեթե միշտ խուսափելով անդրադառնալ Կարապետյանների ու «Տաշիր» բարեգործական հիմնադրամի բազմաթիվ բարեգործական ծրագրերին: Ուշադիր ընթերցողը կարող է հանգիստ համադրել այդ մի քանի լրատվամիջոցների անունները, որոնք, բարեբախտաբար, ոչինչ չեն կազմում, ու իրական պատկերացում կազմել դրանց անաչառության մասին: Ընդ որում, ցանկության դեպքում կարող էին նաեւ անդրադառնալ, թե իրականում ինչ է եղել «Նաիրիտի» աշխատակիցների հետ հանդիպման ժամանակ (որից հետո, եթե չենք մոռացել, ի պատիվ ՀՀ նախագահի, լուծվեց նրանց մի քանի ամսվա աշխատավարձերի խնդիրը), ինչպես է վիրավորել քաղաքացին, որ այդպես զայրացրել է հանգիստ ու հավասարակշիռ բնավորություն ունեցող Կարեն Կարապետյանին: Եթե նման կարգի լրատվամիջոցների «տերերի» համար գուցե վիրավորական չի կաշառակեր բառը, ապա Կարեն Կարապետյանի համար դա անձնական շատ մեծ վիրավորանք է, շատ ավելի մեծ վիրավորանք, քան ցանկացած այլ որակում: Ստացվում է, որ ինչ-որ մեկը հանգիստ կարող է անձնական վիրավորանք հասցնել պաշտոնյային, քաղաքական գործչին, բայց վերջինս պետք է «կուլ տա» այդ վիրավորանքը, քանի որ պաշտոնյա է: Չի կարող այդպես լինել, առավել եւս, որ կոնկրետ Կարեն Կարապետյանն իր ողջ կյանքն ապրել է այնպես, որ որեւէ մեկը, ով էլ նա լինի, չի կարող մեղադրել նրան կաշառակերության մեջ: Գուցե շատ մեծ ցանկության դեպքում այլ մեղադրանքներ կարող են հասցեագրել Կարեն Կարապետյանին, միայն երբեք ոչ կաշառակերություն: Ընդ որում, վստահաբար այդ մասին գիտեն բոլորը, նաեւ նրանք, ովքեր անիմաստ փորձեր են անում գցել նրա բարձր վարկանիշը: Ավելին, հենց Կարապետյանի համար է կաշառակերությունն ամենաանընդունելի ու պարսավելի երեւույթներից մեկը: Հենց այդ նկատառումներից ելնելով էլ պարոն Կարապետյանը շատ պարզ բացատրել է լրագրողներին (որոնց գերակշիռ մեծամասնության հետ մենք ունենք բնականոն, ընկերական, ջերմ հարաբերություններ), որ իրեն անձնական վիրավորանք հասցնողները անպատասխան չեն մնալու: Միեւնույն ժամանակ զգուշացնում ենք, որ մանրամասն ուսումնասիրում ենք վերոնշյալ մի քանի լրատվամիջոցների ու հատկապես ԱԺ-ում հավատարմագրված մի քանի լրագրողների պահվածքի իրական պատճառները՝ հասկանալու՝ որքանով են դրանք ուղղորդված որոշակի ուժի կամ պաշտոնյայի կողմից, կամ որքանով են դրանք ինքնագործունեության արդյունք՝ Կարեն Կարապետյանից ինչ-որ բան «պոկելու» մտադրությամբ: Շատ պիտի ցանկանայինք, որ մի քանի լրագրողներ, որոնք ուղղակի իրենց կենսապահովման խնդիրն են լուծում, չվարկաբեկեն լրագրության հանրույթը, եւ չփորձեն երկրում առկա իրական խնդիրներից շեղել հասարակության ուշադրությունը: Մենք, իհարկե, այս անգամ էլ կարող էինք անտեսել ցանկացած մանր-մունր երեւույթների կողմից ուղղորդվող նմանատիպ «ակցիաները», սակայն հաշվի առնելով, որ ժամանակ առ ժամանակ սա ստանում է համակարգված բնույթ, հարկ ենք համարում մեկ անգամ ու ընդմիշտ փակել այս թեման: Ակնհայտ դիտավորության նոր դեպքերի պարագայում մենք մեզ իրավունք կվերապահենք հասարակությանն իրազեկել իրականության մասին՝ ընդ որում, արդեն անվանապես: Ավարտելով՝ ընդամենը խորհուրդ ենք տալիս՝ ձեռքերը չմտցնել մեղվի փեթակի մեջ....**

*ԱԺ պատգամավոր*
*Կարեն Կարապետյանի գրասենյակ*

***Հ. Գ.*** *- Ի դեպ, հարկ ենք համարում ընդգծել, որ Կարեն Կարապետյանը հարգում է իր իրավունքների կամ օրինականության հաղթանակի համար պայքարող ցանկացած քաղաքացու կամ քաղաքացիների կամքն ու վճռականությունը՝ միեւնույն ժամանակ ակնկալելով փոխադարձ հարգանք: Ընդ որում, խոսքը միայն «Նաիրիտի» աշխատակիցների մասին չէ, այլ նաեւ հասարակության տարբեր շերտերի, որոնք ընդվզում են իրենց իրավունքների ոտնահարման կամ անօրինականության դեմ:*

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# 3,8 մլն դոլար եւ 4 տարի՝ Հայաստանի նոր կենսաթոշակային համակարգին

## *ԱՄՆ ՄԶԳ աջակցությունը 2014-ի հունվարի 1-ից մեկնարկող նոր համակարգի ձեւավորմանն ու հզորացմանը*




Հայաստանում երեկ մեկնարկեց ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության նոր՝ Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագիրը, որը տեւելու է 4 տարի: Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի կառավարությանը՝ ձեւավորելու ու հզորացնելու մարդկային եւ կառուցվածքային կարողությունները՝ կենսաթոշակային նոր համակարգը ներդնելու համար: Այս մասին խոսեցին միջոցառման բոլոր բանախոսները:

Առաջինը ելույթ ունեցավ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար **Արտեմ Ասատրյանը**: Նա այն կարծիքը հայտնեց, որ ծրագիրը թույլ կտա ձեւավորել կենսաթոշակային նոր համակարգի ամբողջ ենթակառուցվածքը, կնպաստի համակարգի կարողությունների հզորացմանը հատկապես տեղեկատվական ոլորտում:

ԱԺ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ **Հակոբ Հակոբյանը** կարեւորեց ԱՄՆ ՄԶԳ աջակցությունը Հայաստանին անկախության տարիներին, որը կազմել է 2,3 մլրդ դոլար: Նա համոզմունք հայտնեց, որ նոր ծրագիրը կնպաստի, որ մեր քաղաքացին պետության աջակցությամբ մասնագիտական, կազմակերպչական հարցերում տեղեկացված լինի:

ԱՄՆ ՄԶԳ առաքելության ղեկավար **Քերըն Հիլիարդը** իր հայերեն ելույթի ժամանակ տեղեկացրեց, որ պատրաստ են աջակցելու Հայաստանում նոր կենսաթոշակային համակարգի ներդրմանը, որը տեղի կունենա 2014-ի հունվարի 1-ից: Նա տեղեկացրեց, որ ծրագրի 4 տարվա գործունեության ընթացքում կներդրվի 3,8 մլն դոլար, որը կուղղվի մասնագետների վերապատրաստմանը, ինստիտուցիոնալ կարողությունների բարելավմանը, նոր տեխնոլոգիաների կիրառմանը համակարգում, ինչը թույլ կտա ավելի լավ ծառայություններ մատուցել կենսաթոշակառուներին: Նա նաեւ անհրաժեշտ համարեց հանրային իրազեկման միջոցով վստահություն ձեւավորել նոր համակարգի նկատմամբ:

Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ **Վարդան Արամյանի** (ֆինանսների նախկին փոխնախարար) կարծիքով՝ ԱՄՆ ՄԶԳ-ն կանգնած է եղել Հայաստանում կենսաթոշակային բարեփոխումների ակունքներում, եւ եթե չլիներ նրա մասնագետների աջակցությունը, այս ոլորտի միջազգային փորձից շատ բաներ մեզ հասանելի չէին լինի:

Կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրն իրականացնող «Քեմոնիքս ինթերնեյշնլ» կազմակերպության փոխնախագահ **Թերի Կրիստալսկին** էլ ասաց, որ ծրագիրը կենսական նշանակություն ունի, քանի որ վերաբերում է բոլոր քաղաքացիներին: Նա վստահեցրեց, որ առաջիկա տարիների ընթացքում ծրագիրը գերազանց արդյունքներ կգրանցի:

Ամփոփելով ելույթները՝ Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագրի ղեկավար **Արտակ Ղազարյանը** հայտնեց, որ 2 հիմնական նպատակներից առաջինը մարդկային եւ ինստիտուցիոնալ կարողությունների զարգացումն է, երկրորդը՝ տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրումը: Լրագրողների հետ զրույցի ժամանակ Արտակ Ղազարյանն ասաց, որ առաջիկայում կհայտարարվեն կենսաթոշակային հիմնադրամների կառավարիչ ընկերությունների անվանումները, որպեսզի քաղաքացիները հնարավորություն ունենան ընտրություն կատարելու, թե որին են վստահելու իրենց գումարները: Խոսքը վերաբերվում է ՀՀ այն քաղաքացիներին, որոնց 40 տարին բոլորած կլինի 2014-ի հունվարի 1-ին, եւ որոնք ընդգրկվելու են պարտադիր կուտակային համակարգում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ

# Նշաձողը բարձր պահել է պետք

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը գրավոր շնորհավորել է Մոսկվայի՝ ազգությամբ յակուտ քաղաքապետ Սերգեյ Սոբյանինին՝ քաղաքապետի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ: Սոբյանինի երդմնակալությունը, ընտրություններում նրա հիմնական մրցակից Նավալնիի՝ ընտրությունների արդյունքից դժգոհությունների համապատկերում, կայանալու է այսօր՝ սեպտեմբերի 12-ին, բայց ՀՀ նախագահը Մոսկվայի քաղաքապետին շնորհավորել է ավելի շուտ, քան վերջինս պաշտոնապես կստանձներ քաղաքապետի իր լիազորությունները:

Սերժ Սարգսյանը պետությունների ղեկավարներից միակն է, ումից Սոբյանինը շնորհավորանք է ստացել. Մոսկվայի քաղաքապետին չեն շնորհավորել ո՛չ, օրինակ, Մաքսային միության անդամներ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը, ո՛չ Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն, ո՛չ Մաքսային միության առաջնային թիրախում գտնվող Մոլդովայի, Ուկրաինայի եւ, իհարկե, Վրաստանի նախագահները: Քաղաքապետի պաշտոնում ընտրված Սոբյանինին չեն շնորհավորել անգամ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի նախագահները:

Այս համապատկերում, ինչպես երեկ էր տեղեկացրել «**Ազգը**», հնարավոր է, որ սեպտեմբերի կեսերին նախատեսված ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի այցը Հայաստան չկայանա: Որպես այցի չկայացման պատճառ մենք մեջբերել էինք հնարավոր երկու ենթադրություն. որ Պուտինը առավել զգայուն է իր դեմ դժգոհությունների նկատմամբ եւ չի ուզում ականատես լինել Հայաստանում առկա հակառուսական տրամադրությունների արտահայտումներին, որոնք նրա այցի օրերին կարող են դրսեւորվել: Հայաստան չայցելելու Պուտինի մյուս պատճառն էլ կարող է լինել այն, որ նա մեր երկրից ստացավ այն, ինչի համար գնալու էր այցելել. Սերժ Սարգսյանի խոսքերով՝ «Հայաստանը որոշում ունի՝ միանալու Մաքսային միությանը»: Այս առումով նկատենք, սակայն, որ դժգոհությունների նկատմամբ զգայուն Պուտինը հաճախ է մեկնում երկրներ, որտեղ նրա դեմ դժգոհությունների ալիքն անհամեմատ ավելի բարձր է, քան Հայաստանում այս օրերին: Եթե Հայաստանում կարելի է գտնել 1000 հոգի, ովքեր հրապարակային կդժգոհեն Պուտինի դեմ, ապա 5000-ն ավելի հեշտությամբ կգտնվեն, ովքեր հրապարակայնորեն կողջունեն Ռուսաստանի նախագահի այցը Հայաստան: Այս ամենն, իհարկե, Պուտինը գիտի: Հետեւաբար, նա Հայաստան չի այցելի, որովհետեւ Հայաստան այցելում էր մի բանի համար, ինչն արդեն ունի:

Բայց շեղվեցինք շատ: Նշաձողի բարձր լինելու մասին խոսենք: Ինչպես տեղեկացնում է lenta.ru-ն, Մոլդովայի Սահմանադրական դատարանը որոշել է կասեցնել իր իսկ կառավարության որոշումը՝ Քիշնեւի օդանավակայանը ռուսական «Ավիա-Ինվեստ» ընկերությանը 49 տարով կոնցեսիոն կառավարման հանձնելու որոշումը: Այս հանգամանքն առավել հետաքրքրական է դառնում, երբ դիտարկում են Ռուսաստանի որոշմամբ, ըստ որի՝ ԵՄ-ի Արեւելյան գործընկերություն նախաձեռնության անդամ Մոլդովայի գինիների մուտքը Ռուսաստան արգելվել է: Քիշնեւն էլ, ահա, պատասխանում է:

Բայց դա, իհարկե, կարեւոր չէ, կարեւորն այն է, որ այսօր Մոսկվայում միգրանտների, այդ թվում՝ հայ միգրանտների կեցությունը բարդացնելով նաեւ հայտնի Սերգեյ Սոբյանինը ստանձնում է Մոսկվայի քաղաքապետի պաշտոնը: Այդ առիթով նրան շնորհավորել են մի շարք նահանգապետներ, առանձին գործիչներ, սենատորներ, Դումայի պատգամավորներ, կուսակից-ընկերներ եւ... ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Անհետացման եզրին գտնվող կովկասյան հովազը՝ «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան»-ում




Կովկասյան կենսաբազմազանության ապաստարանը գտնվում է Արարատի մարզի Ուրծաձոր գյուղի շրջակայքում եւ ընդգրկում է շուրջ 2000 հա տարածք՝ ձգվելով «Խոսրովի անտառ» պետական արգելոցի հարավային սահմանի երկայնքով: Տարածքը 2011թվականից վերահսկվում է Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) կողմից՝ որպես հատուկ պահպանվող տարածք, ինչին աջակցում են ՀՀ բնապահպանության նախարարությունը, ՎիվաՍել-ՄՏՍ ընկերությունը, բրիտանական Համաշխարհային հողային միավորումը (World Land Trust) եւ Նիդեռլանդների Բնության պահպանության միջազգային միության կոմիտեն (ԲՊՄՄ՝ IUCN NL):

Հաշվի առնելով տարածքը մշտապես հսկողության տակ պահելու կարեւորությունը, ՎիվաՍել-ՄՏՍ-ն Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամին նվիրել է երեք «թակարդ» տեսախցիկ՝ հատուկ վայրի բնությանը հետեւելու համար: Տեսախցիկներն ունեն ներդրված հատուկ GSM մոդուլ:

2012 թվականի գարնանը ապաստարանի անտառապահները նկատել էին հովազի ոտնաթաթի հետքեր եւ գտել վերջինիս մազափնջի եւ կղանքի նմուշները, որոնք ուղարկվել էին Իսրայելում գործող լաբորատորիա՝ գենետիկական փորձաքննության: Հաստատվել էր, որ նմուշներն իրապես պատկանում են կովկասյան հովազին: Մեկ տարի անց՝ 2013 թվականի հունիսի 30-ի գիշերն ապաստարանի տեսախցիկներն արձանագրել էին հովազի պոչը:

Արդեն օգոստոսի 7-ի առավոտյան, ապաստարանի տարածքում տեղադրված տեսախցիկը նկարահանել է կովկասյան հովազին՝ իր ողջ շքեղությամբ: Տեսագրության կադրերն ուսումնասիրելիս հիմնադրամի մասնագետները պարզել են, որ հովազն, ամենայն հավանականությամբ, ընկել է թակարդը եւ ունի հետին վերջույթների շարժողականության խնդիր, ինչը հաստատել է նաեւ Ռուսաստանի Դաշնության Գիտությունների ազգային ակադեմիայի Էկոլոգիայի եւ էվոլյուցիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող, հայտնի գիտնական, կենսաբանական գիտությունների թեկնածու Վիկտոր Լուկարեւսկին:

Կովկասյան հովազի, ինչպես նաեւ այլ կենդանիների՝ բեզոարյան այծերի, անդրկովկասյան գորշ արջի, գառնանգղների, գայլերի, վարազների եւ աղվեսների տեսագրությունները, 2010 թվականից ի վեր՝ Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի եւ վերջինիս գործընկերների համատեղ ջանքերի շոշափելի արդյունքն են: Արդյունավետ կառավարման մոտեցման շնորհիվ, ապաստարանն անվտանգ միգրացիոն միջանցք է ապահովում կենդանիների համար, իսկ «Խոսրովի անտառ» պետական արգելոցի համար ծառայում է որպես բուֆերային գոտի: Սա հատկապես կարեւոր է, քանի որ կովկասյան հովազի ներկայությունը պայմանավորված է տարածքում բավարար սննդի, տվյալ դեպքում՝ բեզոարյան այծերի եւ վարազների առկայությամբ: Կովկասյան հովազի պահպանման վերաբերյալ հանրության իրազեկվածությունը բարձրացնելու եւ նոր սերնդին կրթելու նպատակով Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամն իր գլխավոր գործընկեր ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության հետ մի շարք միջոցառումներ կկազմակերպի այս տարի: Դրանց թվում են 6-րդ համահայկական նկարչական մրցույթը եւ «Արեւորդի» միջազգային բնապահպանական 4-րդ փառատոնի շրջանակներում անցկացվող կենդանիների դիմակահանդես-շքերթը:

Անհետացման եզրին գտնվող կովկասյան հովազի բացառիկ կադրերը կարող եք դիտել այստեղ՝ http://www.sunchild.org/index.php?id=140&L=3&id=140:

# Պաշտպանության նախարարության քննչական ծառայությունը՝ Լիսկայի փաստաբան

Այն, ինչ երեկ կատարվեց պաշտպանության նախարարության քննչական ծառայությունում, նման էր վատ բեմադրված շոուի: ՊՆ քննչական ծառայության պետ Արմեն Հարությունյանը նախ ափսոսանք հայտնեց, որ կատարվել է սպանություն, հետո արդեն անցավ Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի եւ նրա ընտանիքի անդամների ակտիվ պաշտպանությանը: Արմեն Հարությունյանը, ի տարբերություն Ռուբեն Սահակյանի, բուռն ելույթներ չէր ունենում, սակայն բովանդակային առումով ոչնչով չէր զիջում փաստաբանին: Պակասում էր միայն, որ Արմեն Հարությունյանն էլ ասեր՝ «Թոռնիկիս արեւ, հավատացե՛ք, Խաչատրյանները մեղավոր չեն»:

Լրագրողների հետ հանդիպմանը քննչական ծառայության պետը ներկայացրեց, թե քանի զենք է եղել եւ ինչպես է օգտագործվել՝ հավելելով, որ Սուրիկ Խաչատրյանին պատկանող ինքնաշեն հրացանը օրինական է: Թե ինչպես կարող է ինքնաշեն հրացանը լինել օրինական, դժվար է պատկերացնել, մանավանդ որ ինքնաշեն հրացանների առնչությամբ Քրեական օրենսգրքով հոդված է սահմանված: Սակայն Հարությունյանը պնդեց, որ օրինական է, քանի որ նախկին ոստիկանապետ Ալիկ Սարգսյանի հրամանը կա: Ենթադրելի է, որ հետին թվով մի հրամանագիր են ստորագրել, որ նախկին ոստիկանապետը իբր ինքնաշեն հրացան է նվիրել: Զարմանալի է, ինչո՞ւ է անհասկանալի արժանիքների համար նախագահի կողմից «Մարտական խաչի» արժանացած Խաչատրյանին ոստիկանապետը ինքնաշեն հրացան նվիրում: «Ոստիկանապետի հրաման կա զենք կրելու թույլտվության մասին: Միայն ինքնաշեն լինելու հանգամանքը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկել», ասաց Հարությունյանը: Նա հավաստիացրեց, որ Բուդաղյանների վրա թիկունքից կրակոց չի եղել: Քննչականից ուսումնասիրել են Սուրիկ Խաչատրյանի բնակարանն ու հավաստիացնում են, որ բակի այդ հատվածի վրա Խաչատրյանները պատշգամբ չունեն: Մինչդեռ տնից կրակելու պարագայում պարտադիր չէ պատշգամբ ունենալ. պատուհանից էլ կարելի է կրակել: «Սուրիկ Խաչատրյանը քնած է եղել, իսկ Լորետա Բարսեղյանը չի բղավել՝ Սուրիկ էս ի՞նչ ես անում», ասաց քննչական ծառայության պետը:

Լրագրողների զարմանքը. «Հնարավո՞ր է, որ տան մոտ վիճաբանություն լինի, հնչի 13 կրակոց, եւ մարդը քնից չարթնանա»:

«Կարող է շատ խորն է քնել, ի՞նչ իմանանք»:

Քննչականում պատկերացում չունեն, թե ինչպես է առգրավված տեսագրությունը հայտնվել Սյունիքի մարզպետարանի աշխատակիցների մոտ, ովքեր այն տարածել էին համացանցում եւ կատարվածի առնչությամբ բեսթսելլեր հորինել: «Այդ առնչությամբ նախաքննությունը ընթանում է», ասաց Հարությունյանը

Քննչականից չեն պարզել, թե դեպքից հետո ինչու է Գորիսի ոստիկանությունը ուշ եկել դեպքի վայր, քննչականից նաեւ խուսափում են պատասխանել հարցին, թե ինչու է Սուրիկ Խաչատրյանին պատկանող զենքը հայտնվել նրա թիկնապահի ու որդու մոտ: Այս առնչությամբ նրանք որեւէ խախտում չեն տեսնում, մինչդեռ Քրեական օրենսգրքի «Հրազենը կամ ռազմամթերքն անփութորեն պահպանելը» 239 հոդվածում կարդում ենք, որ «Հրազենը կամ ռազմամթերքը անփութորեն պահպանելը, որը պայմաններ է ստեղծել այդ հրազենը կամ ռազմամթերքը ուրիշի կողմից օգտագործելու համար, ինչպես նաեւ զենքը կամ ռազմամթերքն այլ անձին հանձնելը, եթե դա առաջացրել է ծանր հետեւանքներ, պատժվում է տուգանքով, կալանքով կամ ազատազրկմամբ»: Հաշվի առնելով, որ Սուրիկ Խաչատրյանին պատկանող զենքից մարդ է մահացել, ապա սույն հոդվածով Սյունիքի նախկին մարզպետը պետք է ազատազրկվեր:

Քննչական ծառայության պետն անշուշտ գիտի այս հոդվածի եւ նրա դրույթի մասին, սակայն չի բարձրաձայնում, երեւի նպատակահարմար չէ ու, մեղմ ասած, ցրում է հարցը: Ընդհանուր առմամբ, այն հարցերին, որոնք դուր չէին գալիս Հարությունյանին, նա պատասխանում էր կիսատ-պռատ, լղոզված, կմկմալով: «**Ազգ**»-ի հարցին՝ Տիգրան Խաչատրյանի արյան մեջ թմրանյութ հայտնաբերվե՞լ է, դա գործում առկա՞ է, Հարությունյանը օրենքներ կարդաց, շուռումուռ տվեց պատասխանը ու վերջում ասաց, որ Արտակ Բուդաղյանի արյան մեջ էլ ալկոհոլ են հայտնաբերել: Մեր կրկնահարցին՝ «Եղե՞լ է Տիգրան Խաչատրյանի արյան մեջ թմրանյութ», Հարությունյանը ասաց. «Այ’ո, եղել է»:

Ինչ վերաբերում է Արտակ Բուդաղյանի արյան մեջ ալկոհոլի հայտնաբերմանը, Հայկ Ալումյանի տեղեկացմամբ՝ զինդատախազությունը տարածել է հաղորդագրություն, որ Բուդաղյանի արյան մեջ եղել է 4 պրոմիլե, մինչդեռ եղել է 1 պրոմիլե: Երեկ Հարությունյանը հաստատեց, որ Հարությունյանի արյան մեջ եղել է 1 պրոմիլե: Ի դեպ, 1 պրոմիլեն չի կարող լուրջ ազդեցություն թողնել:

Քննչականը չի պարզել՝ ի՞նչ պայմաններում է կրտսեր Խաչատրյանը թմրանյութ հայթայթել եւ օգտագործել:

Հարությունյանը հավաստիացնում է, որ կատարվածը ինքնապաշտպանություն է եղել: Լրագրողների դիտարկմանը՝ հնարավո՞ր է, որ 11 փամփուշտ կրակած անձը ինքնապաշտպանվե՞ր, երբ հակառակ կողմից հնչել է 2 կրակոց, Հարությունյանը խուսափեց պատասխանից, միայն հավելեց, որ իրենք իրավական գնահատականներ կատարվածին չեն տալիս:

Նրա խոսքերով՝ Զարզանդ Նիկողոսյանը եւ Տիգրան Խաչատրյանը անմեղ էին, դա է պատճառը, որ նրանք ազատ են արձակվել: Ստացվում է, որ նրանք անօրինական են երկու ամիս կալանքի տակ պահվել, եթե անմեղ են. Հարությունյանը կրկին շփոթվեց. այդ առնչությամբ քննություն է տարվում:

Բազմաթիվ հրամանատարներից, զինվորականներից, Հայաստանի եւ ԼՂՀ պաշտպանության նախարարներից բազմիցս ենք լսել գնահատանքի խոսքեր ինչպես Արտակ Բուդաղյանի մարդկային որակների, այնպես էլ հրամանատարական աշխատանքի վերաբերյալ: ԼՂՀ ՊԲ հրամանատար Մովսես Հակոբյանը երկու անգամ հրապարակավ հայտարարել է, որ Արտակ Բուդաղյանը իր հպարտություն հրամանատարներից է, նրա հրամանատարական որակները բարձր է գնահատել նաեւ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը: Մովսես Հակոբյանի ներկայացմամբ՝ այն զորամասերը, որտեղ ծառայել է Բուդաղյանը, միշտ համարվել են լավագույնը: Գործընկեր հրամանատարների խոսքերով՝ Բուդաղյանը հաճախ իր գրպանից էր գումար տրամադրում զորամասի այս կամ այն հարցի լուծմանը:

Տարակուսելի է, որ բանակի լավագույն հրամանատարի կողքին այսօր կանգնած չէ պաշտպանության նախարարությունը, ոչ թե անիրավ կերպով նրան պաշտպանելու, այլ իրավազրկումից զերծ պահելու համար: Ի վերջո, բացի քննչական ծառայությունից ու Խաչատրյանների ընտանիքից եւ մտերիմներից, քչերն են հավատում, որ մեղավոր են Բուդաղյանները: Դա են վկայում լրատվամիջոցներով տպագրվող հոդվածները, տեսակետներն ու զանգերը, որ ստանում ենք քաղաքացիներից:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# «Տիզբոն կանչվելու» սինդրոմը

*1-ին էջից*

Եղիշեի «Վասն Վարդանի եւ հայոց պատերազմի» մատյանի առանցքը հայոց նախարարներին Տիզբոն կանչելու պատմությունն է: «Փաստն» արձանագրվել է՝ Հազկերտը «թուղթ» ուղարկեց Հայաստան, կաթողիկոսն ու նախարարները հավաքվեցին եւ մերժեցին կրոնափոխության պահանջը, Պարսից արքան գազազեց, ատյան կանչեց Տիզբոն, որտեղ նրանք «կեղծ երդում» ընդունեցին, բայց երկիր վերադառնալիս՝ Անգղ ամրոցում, սպարապետն ու համակիրները բացահայտվեցին, ապստամբեցին եւ այլն:

...Տիզբոն հասնելու համար հայ ավագանին ամիսների ճանապարհ պիտի կտրեր, նույնքան ժամանակ էլ՝ վերադառնար: Եթե բոլոր ազդեցիկ նախարարները կանչվել էին Պարսից մայրաքաղաք, հայոց այրուձին էլ ինչ-որ տեղ՝ Քուշանքում, կռվում էր Պարսկաստանի թշնամիների դեմ, ապա ի՞նչն էր խանգարում, որ Հայաստանում պարսկական «պարետային» զորքն սկսեր եկեղեցիներ քանդել, կրոնավորներին ջարդել, նախարարական ամրոցները պաշարել:

Եթե Հազկերտի խարդախ նպատակը Հայաստանն անգլուխ թողնելն էր, ի՞նչ մի դժվարություն էր Արտաշատ-Տիզբոն գնալ-գալու երկա՜ր ճանապարհի մի հանգրվանում շրջապատել, պատմիչի ասած՝ սպառսպուռ կոտորել հայոց անհնազանդ նախարարներին: Վերջապես, եթե մեկ է՝ ապստամբելու էին, էլ ինչո՞ւ էին վեր կացել-գնացել Հազկերտի ոտքը,- մեզանում այսպիսի հարցեր չեն քննարկվում:

Ուստի եւ ենթադրելի է, որ «Տիզբոն կանչվելու» մտակաղապարը մեզ թվում է «օրինաչափություն»: Ի՞նչ են ասում Սերժ Սարգսյանի ընդդիմախոսները: «Բա ի՞նչ էր մտածում, երբ Եվրոպայի հետ «խաղեր էր տալիս», Ռուսաստանը կներե՞ր», իսկ երբ ԵՄ պաշտոնյաները հայտարարեցին, որ ասոցիացման համաձայնագրի եւ Մաքսային միության պայմանագրի «համատեղումը խնդրահարույց է», հայ «արեւմտամետները» հրճվեցին. «Իհարկե, ուրիշ ինչպե՞ս էր լինելու, Եվրոպան սկսել է պատժել»:

«Տիզբոնը Տիզբոն է»՝ լինի Բրյուսել, թե Մոսկվա: Ուղղակի ռուսները մի քիչ «անհամբեր եւ ուղղամիտ» են, քան եվրոպացիները, որ կարողանում են բանն այնպես ներկայացնել, իբր՝ ասոցիացման համաձայնագիրն ավելի շատ Հայաստանին, քան իրենց էր պետք: Եվ, ըստ երեւույթին, Բրյուսելում ու Մոսկվայում մեզ մեզնից լավ գիտեն: Համոզված են, որ Հայաստանում մի «Վասակ» միշտ էլ գտնվելու է, ողջ պատասխանատվությունը բարդելու են գլխին եւ վերադառնալու են հերթական «հնարավորության» շուրջը շատախոսություններին:

«Տիզբոն կանչվելը» գուցե ստեղծել է պատմագրությո՞ւնը: Իրականության մեջ թերեւս եղել է Հայոց թագավորությունը գոնե անվանապես վերականգնելու հնարավորությո՞ւն: Անդրկասպյան տափաստաններում նախաթուրք հորդաների հետ կենաց-մահու պատերազմի ներքաշված Պարսկաստանը, որպեսզի իրեն ապահովագրի նաեւ Ալանաց դռներից հորդացող սպառնալիքից, որ դարձյալ թուրք-թուրանական էր, հայերին քաղաքական դաշինքի պես մի առաջարկություն էր արել՝ մարզպան Վասակ Սյունեցո՞ւ միջոցով:

Եվ Մամիկոնյան իշխանական տունն ու եկեղեցին վերստին «թարս ձիու վրա էին նստել»: Ապստամբությունը գուցե Վասակի՞ դեմ էր, ոչ թե՝ Հազկերտի: Խնդիրը գուցե «հավատափոխությո՞ւնը» չէր, այլ՝ «ո՞վ է Հայոց թագավոր» հռչակվելու, Վարդա՞նը, թե՞ Վասակը: Եվ Արտաշատում հայ ավագանին չէ՞ր կարողացել զսպել «Տարոնացու խելագարությունը», եւ եղել էր Ավարա՞յր:

...Խորհրդային շրջանում փորձեցինք ինքնասփոփվել, որ Պարսից դեմ ապստամբել էին վրացիք եւ աղվանները նույնպես: Բայց երբ հայ ազնվականության ընտրանին ջարդվում էր Ավարայրում, Աղվանքը եւ Վրաստանը, ղարաբաղցու ասած, «մարաղ մտած» համբերությամբ սպասում էին, որ ինքնահոշոտվող Հայաստանից յուրաքանչյուրն իր «արդար բաժինը» պոկի: «Պտուղները» քաղում ենք առ այսօր՝ Ադրբեջանը Ղարաբաղն է իրենը համարում, Վրաստանը՝ Լոռին: Իսկ Ժիրայր Լիպարիտյանը Հայաստանի երկրորդ նախագահին անվանում է «մարդ, որ պատմություն չէր կարդացել եւ չէր ուզում կարդալ»: Դեռ հարց է՝ արժե՞ մի պատմություն կարդալ, որի 99,99 տոկոսը ոչ այնքան Հայաստանի քաղաքական անցյալի, որքան որ պարթեւ Անակի որդի Գրիգոր Լուսավորչի մասին է:

0,01 տոկոսի բացառություններ կան: Աղվանից աշխարհի պատմության հեղինակը մի տեղ միջանկյալ ակնարկում է, որ Սահակ Պարթեւը Տիզբոնում թոռան՝ Վարդան Մամիկոնյանի համար միջնորդել-մարզպանական պաշտոն է խնդրել: Ուշադրության արժանի դիտարկում է, չէ՞: Բայց դա նախագահի խնդիր չէ, այլ՝ անաչառ պատմաբանի կամ խորհրդականի:

Չլիներ այդպես՝ «Տիզբոն» գնալու հարկ չէր ունենա Հայաստանի եւ ոչ մի իշխանություն: Բայց որովհետեւ, ինչպես Հրանտ Մաթեւոսյանն է ասում, «այդ այդպես է», ուրեմն մեր գիտակցությա՞ն, թե՞ ենթագիտակցության մեջ, չգիտեմ, սակայն ինչ-որ տեղ դեռ կարծրակարծր նստած է «Տիզբոն կանչվելու» սինդրոմը:

# Ադրբեջանում Փաշաեւներն արդեն կասկածելի՞ են

Ժամանակ առաջ մենք անդրադարձել էինք Մեհրիբան Ալիեւայի «անհետանալու» խնդրին: Բանն այն է, որ Իլհամ Ալիեւը շարունակում է իր «թանկագին կեսին» հեռու պահել նախընտրական քարոզչությունից: Ադրբեջանի առաջին տիկնոջ անունը ջնջված է թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր մամուլից, էլեկտրոնային լրատվամիջոցներից, մի բան, որ ադրբեջանական քաղաքական ավանդույթների շրջանակներում չի տեղավորվում:

Սակայն եթե ուշադրություն դարձնենք հարեւան երկրից ստացվող տեղեկատվությանը, նկատելի կդառնա, որ իշխող վարչախումբն իրոք լուրջ կասկածներ ունի առնվազն Մեհրիբան Ալիեւայի մերձավոր հարազատների հանդեպ: Երեկ, մասնավորապես, virtualaz.org-ը Բաքվում գումարված Եվրոպա-Ադրբեջան ներդրումային խորհրդաժողովի մասին տեղեկատվությունը վերնագրել էր այսպես. «Հաֆիզ Փաշաեւի ակադեմիայում Եվրոհանձնաժողովի ներկայացուցիչը քննադատել է Ադրբեջանին»:

Խոսքն Ադրբեջանի ԱԳՆ դիվանագիտական ակադեմիայի մասին է, որի տնօրենն Հաֆիզ Փաշաեւը Մեհրիբան Ալիեւայի հորեղբայրն է: Վերջինս ոչ հեռավոր անցյալում զբաղեցնում էր ԱԳ նախարարի առաջին տեղակալի պաշտոնը, ավելի վաղ Միացյալ Նահանգներում Ադրբեջանի դեսպանն է եղել: Ակնհայտ է, որ «Հաֆիզ Փաշաեի ակադեմիայում Եվրոհանձնաժողովի նախագահը քննադատել է Ադրբեջանին» վերնագիրը պատահաբար չի ընտրվել: Այդ կերպ լրատվամիջոցը ցանկացել է «ինչ-որ բան ասել»:

Իսկ ի՞նչ է ասել Եվրոհանձնաժողովի ներկայացուցիչը: Ադրբեջանում ԵՄ առաքելության ղեկավար Թորաֆ Պիլյան ընդգծել է, որ «տնտեսությունը (Ադրբեջանի) կախված է նավթային գործոնից, թույլ մրցունակ է եւ կոռումպացված»: Խորհրդաժողովի մյուս մասնակիցները, ընդհակառակը, ըստ նաեւ «Թուրան» գործակալության, համարել են, որ Ադրբեջանի «վերջին քսանամյակի քաղաքական կայունությունը նրա տնտեսական զարգացման գրավականն է»:

Շեշտվում է նաեւ, որ ոչ ոք չի անդրադարձել Ադրբեջանում ժողովրդավարության եւ մարդու իրավունքների հարցերին՝ «գերադասելով տնտեսական նպատակահարմարությունը»: Բայց դա բոլորովին այլ թեմա է: Մեզ ավելի կարեւոր է թվում, թե ինչո՞ւ հատկապես ընդգծվել է, որ Եվրոհանձնաժողովի ներկայացուցիչն Ադրբեջանին քննադատել է «Հաֆիզ Փաշաեւի ակադեմիայում»:

Արդյոք այդպիսով չի՞ ակնարկվում, որ ԱԳՆ դիվանագիտական ակադեմիայի ռեկտորը որոշակիորեն «թերացել է իր պարտականություններում»: Այսինքն, նա կարող էր միջոցառումն այնպես կազմակերպել, որ ընդհանրապես դրական համայնապատկերը «չխաթարվեր» տիկին Պիլյայի քննադատական դիտողություններով: Չէ՞ որ ակնհայտ է, որ ներդրումային հարցերով խորհրդաժողովը կազմակերպվել է նախընտրական քարոզչության նկատառումներով: Իշխող վարչախումբը դրանով փորձել է տպավորություն ստեղծել, թե «որքան կարեւոր գործընկեր է Ադրբեջանը Եվրոմիության համար», որ իր եվրոպացի գործընկերները «չափազանց բարձր են գնահատում տիրող քաղաքական կայունությունը եւ տնտեսական առաջընթացը»:

Իսկ ստացվել է այնպես, որ իրավիճակին ավելի քաջատեղյակ՝ Ադրբեջանում ԵՄ առաքելության ղեկավարը «փչացրել է» Իլհամ Ալիեւը տրամադրությունը: Ընդ որում, դա տեղի է ունեցել ոչ թե ինչ-որ ընդդիմադիր կուսակցության գրասենյակում, այլ՝ Ադրբեջանի ԱԳՆ դիվանագիտական ակադեմիայում, որի ռեկտորը Մեհրիբան Ալիեւի հորեղբայր Հաֆիզ Փաշաեւն է: Սա է վերոհիշյալ տեղեկատվության թողած տպավորությունը:

Իսկ եթե այդպես է, ապա չի՞ նշանակում, որ Իլհամ Ալիեւն իրոք Փաշաեւներին կասկածում է իր դեմ «նյութված դավադրության» առնվազն համակրելու մեջ: Ամենայն հավանականությամբ, նախագահի պաշտոնում «վերընտրվելուց» հետո Իլհամ Ալիեւը ձեռնամուխ է լինելու մերձավոր շրջապատում վերադասավորումներ անելու քայլերի: Եվ բացառված չէ, որ Փաշաեւների ընտանիքն ունենա կորուստներ: Մանավանդ որ ե՛ւ Հաֆիզ Փաշաեւը, ե՛ւ Արիֆ Փաշաեւը՝ Մեհրիբան Ալիեւայի հայրը, վաղուց հատել են թոշակային տարիքի սահմանը, եւ նրանց կարելի է անաղմուկ ուղարկել «վաստակած հանգստի»: Բայց դրանով կավարտվի՞, թե՞ կբացահայտվի իշխող ընտանիքի ներքին հակասությունների գաղտնիքը՝ խնդիրը դա է:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Ամենահարուստ եւ մնացյալ ամերիկացիների խզումը հասել է բարձրակետին




**ԱՄՆ-ում 1 տոկոս կազմող ամենահարուստների եւ մնացյալ բնակչության խզումը հասել է վերջին հարյուրամյակում իր բարձրակետին: Այդ մասին գրում է Huffington Post թերթը՝ վկայակոչելով Կալիֆոռնիայի համալսարանի, ինչպես նաեւ Օքսֆորդի եւ Փարիզի տնտեսագիտության դպրոցի տնտեսագետներին:**

**Ամերիկացիների 1 տոկոսը 2012 թ. ստացել է տնտեսությունների ամբողջ եկամտի 19,3 տոկոսը: Նախկին ռեկորդը 1927 թ. ցուցանիշն էր՝ 18,7 տոկոս: 10 տոկոս կազմող առավել ապահովված բնակչությունը անցյալ տարի ստացել է բոլոր եկամուտների գրեթե կեսը:**

**Մեկ տոկոս կազմող գերհարուստները 2012 թ. իրենց եկամուտներն ավելացրել են 20 տոկոսով, մնացյալ ամերիկացիները՝ 1 տոկոսով:**

**Ամենահարուստները սկզբում շատ տուժեցին 2007-2009 թթ. վարկային ճգնաժամից. նրանց վաստակը նվազեց 36 տոկոսով, մյուսներինը՝ 11,6 տոկոսով: Սակայն բաժնետոմսերի կտրուկ թանկացումը եւ 2010-2012 թթ. կորպորատիվ շահույթների ավելացումը հարուստներին թույլ տվեցին արմատապես բարելավել իրենց վիճակը եւ ստանալ ամերիկացիների եկամուտների հավելաճի 95 տոկոսը:**

**1990-ականների տնտեսական աճի ժամանակաշրջանում այդ ցուցանիշը կազմել էր 45 տոկոս, 2000-ականների վերելքի ժամանակ՝ 65 տոկոս:**

**Հարուստ եւ աղքատ ամերիկացիների եկամուտների խզումը էապես նվազեց 1930-ականներին եւ 2-րդ աշխարհամարտին հաջորդած տնտեսական բուռն աճի ժամանակաշրջանում: Ձեւավորվեց խիստ բազմաշերտ միջին խավ: 1973 թ. 1 տոկոս ամենահարուստների եկամուտները կազմեցին բոլոր ամերիկացիների եկամուտների ընդամենը 7,7 տոկոսը:**

**Սակայն 1970-ականների վերջերից իրավիճակը կտրուկ փոխվեց: Նույնիսկ 1990-ական թթ. համացանցի ծաղկման շրջանում բնակչության մեծ մասի եկամուտներն աճեցին ընդամենը 6,6 տոկոսով, մինչդեռ ամենահարուստների մոտ այդ աճը կազմեց 86 տոկոս:**

## ՍԵՐՏԱՑՈՒՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

# Մոսկվան որոշեց «С-300»-ներ վաճառել Իրանին



**ՌԴ իշխանությունները սկզբունքային որոշում են ընդունել Իրանին ընդառաջելու միանգամից երկու կարեւոր հարցերում: Մեկը վերաբերում է «С-300» ձեւափոխված զենիթահրթիռային համալիրների մատակարարմանը եւ Բուշեհրի աէկ-ի երկրորդ էներգաբլոկի կառուցմանը, տեղեկացնում է մոսկովյան «Կոմերսանտ» թերթը:**

**Մերձկրեմլյան մի աղբյուր թերթին հայտնել է, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը կարգադրել է սկսել երկու գործարքների հետ կապված համաձայնագրերի մշակումը: Առաջինը կոչված է հարթելու հակաօդային պաշտպանության համակարգերի առնչությամբ Թեհրանի հետ ծագած վեճը. Իրանին С-300 ВМ «Антей-2500» զենիթահրթիռային համալիրների 5 դիվիզիոնի մատակարարման դիմաց (մոտ 800 մլն դոլար) Թեհրանը պետք է հետ կանչի նախորդ պայմանագրի ձախողման համար «Рособоронэкспорт»-ին իր ներկայացրած 4 մլրդ դոլարի հայցը:**

**Նախորդ տարբերակը՝ «Тор-М1Э» զենիթահրթիռային համալիրի մատակարարումը, Թեհրանին չէր գոհացրել: Նման փոխզիջման պատրաստակամություն վերջերս արտահայտել էր ՌԴ-ում Իրանի դեսպան Սեյեդ Մահմուդ Ռզա Սաջադին՝ ասելով, որ Իրանի իշխանությունները կկարողանային «հանդես բերել ճկունություն»:**

**Նույն աղբյուրը հայտարարել է, որ Իրանի հետ կապված երկրորդ նախագիծը Ռուսաստանի համար «տնտեսական առումով առանձնապես շահավետ չէ. այն ավելի շուտ քաղաքական է»: Մոսկվան պատրաստ է Թեհրանի հետ համաձայնագիր ստորագրել Բուշեհրի ատոմակայանի երկրորդ էներգաբլոկի կառուցման վերաբերյալ:**

**ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը մտադիր է երկու թեմաները Իրանի նախագահ Հասան Ռոուհանիի հետ քննարկել սեպտեմբերի 13-ին Բիշքեկում: Փորձագետները նշում են, որ Մոսկվա-Թեհրան մերձեցմանը զգալիորեն նպաստում է Սիրիայի հարցում նրանց համախոհությունը, ինչպես նաեւ ՌԴ-ԱՄՆ հակասությունների սրումը:**

Պ. Ք.

# Սիրիան ամբողջ քիմիական զենքը կհանձնի միջազգային վերահսկողության




**Սիրիայի վարչապետ Վաել ալ Խալկին հայտարարել է, որ իր երկիրը պաշտոնապես ընդունում է ամբողջ քիմիական զենքը միջազգային վերահսկողությանը հանձնելու Ռուսաստանի առաջարկությունը: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**Վարչապետի խոսքերով, Դամասկոսն այդ քայլին կդիմի «հանուն սիրիացիների կյանքի պաշտպանության»: Ավելի վաղ Մոսկվա կատարած այցելության ժամանակ Ռուսաստանի առաջարկությունը ողջունել էր Սիրիայի արտգործնախարար Վալիդ Մուալլեմը:**

**Մոսկվան սեպտեմբերի 11-ին հայտարարեց, որ Դամասկոսին խնդրել է սեղմ ժամկետում մշակել քիմիական զենքի պահեստները միջազգային ընկերակցության վերահսկողությանը հանձնելու եւ հետագայում ոչնչացնելու կոնկրետ ծրագիր:**

**ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման Կոնգրեսին խնդրել է հակասիրիական ռազմական գործողություն սկսելու բանաձեւի առթիվ քվեարկությունը հետաձգել, որպեսզի Ռուսաստանը Սիրիայի քիմիական զենքը միջազգային վերահսկողությանը հանձնելու բանակցությունների ժամանակ ունենա: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը, վկայակոչելով Սենատի անդամներին:**

**Politico կայքէջը տեղեկացնում է, որ Սենատում այնուամենայնիվ կշարունակվի Սիրիային հարվածելու հնարավորության քննարկումը: Սենատում դեմոկրատ մեծամասնության առաջնորդ Հարրի Ռիդի խոսքերով, Սիրիայի հետ կապված քվեարկությունը հետաձգվել է առնվազն մինչեւ եկող շաբաթ:**

# Երիտասարդական նվագախմբի նոր համերգաշրջանը բացվեց Ջուլիա Զիլբերքվիթի հետ համերգով

Սեպտեմբերի 10-ին Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի նոր համերգաշրջանը մեկնարկեց հանրահայտ դաշնակահարուհի Ջուլիա Զիլբերքվիթի (ԱՄՆ) հետ համատեղ համերգով:

Աշնանային համերգաշրջանի բացման առաջին համերգին հնչեցին` Սերգեյ Սլոնիմսկի, «Հրեական ռապսոդիա». կոնցերտ դաշնամուրի, լարայինների, ֆլեյտայի եւ հարվածայինների համար, Պյոտր Իլյիչ Չայկովսկի Սիմֆոնիա թիվ 4, երկ 36 ֆա մինոր:

Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանն իր ուրախությունը հայտնեց մենակատարի` Ջուլիա Զիլբերքվիթի հետ համագործակցության առթիվ:

Ս. Սմբատյանի հավաստմամբ, 2013-14թթ. համերգաշրջանը լինելու շատ բովանդակալի լի անակնկալներով. կան միջազգային պայմանավորվածություններ, Հայաստան կժամանեն հանրահայտ մենակատարներ: Բացի այդ, նոր համերգաշրջանում երիտասարդական նվագախումբը հրավիրված է լավագույն փառատոների ու գործակալությունների կողմից:

Համերգից առաջ Ջուլիա Զիլբերքվիթը հանդես եկավ մամուլի ասուլիսով, որի ընթացքում ընդգծեց, որ տպավորված է Երեւանով, որտեղ առաջին անգամ է գտնվում:



Նշենք, որ Ջուլիա Զիլբերքվիթն առաջին անգամ չէ, որ Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի հետ ելույթ է ունենում, մինչ այս` անցած տարի համերգային ծրագրով հանդես է եկել Օդեսայում. «Նվագախումբն ուղղակի հրաշալի է, մենք կատարել ենք շատ բարդ ստեղծագործություններ: Ելույթ եմ ունեցել շատ դիրիժորների հետ: Կան դիրիժորներ, որոնք այնքան էլ շատ չեն սիրում նվագել մենակատարների հետ, սակայն Սերգեյ Սմբատյանը միշտ մեր կողքին է եւ շատ լավ հարաբերությունների մեջ եմ իր հետ»:

Ջուլիա Զիլբերքվիթն ուրախությամբ լրագրողներին ասաց, որ Երիտասարդական նվագախումբը շատ լավ, պրոֆեսիոնալ կոլեկտիվ է եւ շատ աշխատասեր. «Երբեք չեն նեղսրտում, երբ նրանց խնդրում ես ինչ-որ բան եւս մեկ անգամ կրկնել: Երիտասարդական էներգիա եմ ստանում այս նվագախմբի հետ աշխատելիս»: Դաշնակահարուհին տեղեկացրեց նաեւ, որ կոմպոզիտոր Սերգեյ Սլոնիմսկին շատ ուրախ է «Հրեական ռապսոդիայի» հայաստանյան պրեմիերայի համար:

Հատկանշական է, որ Ջուլիա Զիլբերքվիթը ծանոթ է հայկական երաժշտությանը ու շատ է սիրում Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները. «Արամ Խաչատրյանի գործերը մեր ռեպերտուարի մասն են կազմում, այնպես, ինչպես Բախը, Մոցարտը, Շոստակովիչը: Ես չգիտեմ որեւէ երաժշտի, որ ստանալով մասնագիտական կրթություն դպրոցում եւ կոնսերվատորիայում, չնվագի Խաչատրյանի գործերից որեւէ մեկը»:

Դաշնակահարուհի Ջուլիա Զիլբերքվիթը տեղեկացրեց նաեւ, որ Նյու Յորքում բազմիցս է մասնակցել Հայոց ցեղասպանության եւ Հոլոքոստի հիշատակին նվիրված համերգներին, որոնք արդեն ավանդույթ են դարձել եւ 10-15 տարի անցկացվում են աշնան ամիսներին: Դաշնակահարուհին նշում է, որ երկու ազգերի այդ մեծ վիշտը համախմբում է մարդկանց:

Նվագախմբին համերգաշրջանի բացման առթիվ շնորհավորելու էր եկել նաեւ կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանը, որն ընդգծեց. «Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի ելույթները երիտասարդական ոգի են բերում մեծ արժեքներին: Շատ ուրախ եմ մեր երիտասարդների աշխատասիրության, նվիրվածության համար»:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Վան Գոգի նորահայտ «Արեւամուտը Մոնմաժուրում» կտավը Ամստերդամի թանգարանում

**Վան Գոգի նորահայտ գլուխգործոցը կոչվում է «Արեւամուտը Մոնմաժուրում». նկարը պարզվում է երկար տարիներ մնացել է անհայտ, գտնվելով նորվեգացի կոլեկցիոների խորդանոցի փոշիների մեջ: Կտավը նա ձեռք է բերել 1908-ին, սակայն դա չի զարդարել իր տունը, որովհետեւ նա համոզված է եղել, որ օրիգինալը չէ, տեղեկանում ենք euronews.com կայքից:**

**Ամստերդամի Վան Գոգի թանգարանի համար, որը հոլանդացի մեծ վարպետի նորահայտ կտավը հանրությանը կներկայացնի սեպտեմբերի 24-ին, նման մասշտաբի ցուցադրությունը բացառիկ երեւույթ է, նախադեպը չունեցող: Ինչպես նկատել է թանգարանի տնօրեն Ակսել Ռուգերը, այդ նկարը նոր էջ է բացում Վան Գոգի ստեղծագործության մեջ:**



**Բացառիկ է նաեւ այն հանգամանքը, որ կտավը պատկանում է նկարչի ստեղծագործական վերելքի շրջանին, երբ Վան Գոգը ապրում եւ աշխատում էր Ֆրանսիայի հարավում, նշանավոր Առլում, երբ ստեղծվել են նրա հանճարեղ «Արեւածաղիկները», «Դեղին տունը» եւ այլ գործերը:**

**Համոզվելու համար կտավի պատկանելությանը Վարպետի վրձնին, մասնագետները տեւական եւ հանգամանալի աշխատանք են տարել` նկարչի ոճի, օգտագործած տեխնիկայի, գույնի համեմատության, արվել է ռենտգենյան լուսանկար, կտավի համակարգչային անալիզ, Վան Գոգի նամակների նորովի ընթերցում:**

Մ. Բ.

# Հայկական հուշարձանների ճանաչման ծրագիր

**«Հայկական հուշարձանների ճանաչման ծրագիր» (AMAP) կազմակերպությունը հայտարարում է«Մշակութային փոխանակման հարթակ» (CULTUR-EXP) ծրագրի մեկնարկը, որն իրականացվում է Եվրոպական Միության ընդհանուր գործողությունների ծրագրի «Սեւծովյան ավազան 2007-2013»-ի շրջանակում: AMAP-ի տարածած հաղորդագրության համաձայն` ծրագրի իրականացման աշխատանքները սկսվել են սույն թվականի հուլիսի 1-ին: Ծրագիրն իրականացնում են կազմակերպություններ հինգ երկրներից Վրաստանից, Հայաստանից, Հունաստանից, Բուլղարիայից եւ Մոլդովայից: Տեւողությունը 24 ամիս է: Ծրագիրը նպատակ ունի նպաստել մշակույթի անդրսահմանային փոխանակմանը տրամադրելով նորարարական, բազմալեզու SS պլատֆորմ հիմնված առկա բաց ծրագրային կոդով սոցիալական պլատֆորմների լուծումների վրա եւ հարմարեցված մշակույթի գործիչների (նկարիչներ, գրողներ, փառատոնների կազմակերպիչներ, եւ այլն), մշակութային օպերատորների (թատրոններ, թանգարաններ եւ այլն) եւ մշակութային շուկայի այլ դերակատարների գործունեությանը:**



# Բոլիվուդյան երեկո Երեւանում



Սեպտեմբերի 16-ին Հակոբ Պարոնյանի անվան Երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում հայ հանդիսատեսը կարող է վայելել բոլիվուդյան երգի ու պարի շոու` մասնակցությամբ Հնդկաստանից ժամանած «Շուգըր Ն' Սփայս» խմբի:

Բոլիվուդյան երգի ու պարի երեկոն կսկսի 18.30-ին, իսկ մուտքն ազատ է բոլորի համար:

Միջոցառումն իրականացնում են Հայաստանում Հնդկաստանի դեսպանությունը, ՀՀ մշակույթի նախարարությունը եւ Մշակութային կապերի հնդկական խորհուրդը:

Ի. Պ.

# «Որդան կարմիր» ռոք խմբի «A4» ձայնասկավառակի շնորհանդեսը

Այսօր Երեւանի Հ. Թումանյանի անվ. տիկնիկային թատրոնում տեղի կունենա «Որդան կարմիր» ռոք խմբի «A4» ձայնասկավառակի համերգ-շնորհանդեսը: «A4» ձայնասկավառակը ըմբոստություն է մարդու անտարբերության, անհաղորդության, թելադրված շրջանակներից դուրս գալու անկարողության դեմ, փորձ է` այդ շրջանակները քանդելու: «Որդան կարմիր» խմբի առանձնահատկություններից գլխավորը երգերի սոցիալականությունն է. խմբի անդամների համոզմամբ` մեր օրերում արվեստը չի կարող միայն արվեստի համար գոյություն ունենալ, արվեստը սոցիալական է, արվեստը գործիք է` իրականության բացասական դրսեւորումների դեմ պայքարի: Այս սկզբունքը տեսանելի է եղել խմբի գործունեության ողջ ընթացքում` 2005թ.-ից մինչ օրս. խումբը տարբերաբար մասնակցել է մարդու իրավունքների, բնապահպանական եւ այլ սոցիալական խնդիրների, ուղղված երիտասարդական արտ-նախաձեռնությունների:

Ձայնասկավառակի շնորհանդեսից հետո «Որդան կարմիրը» կմեկնի եվրոպական մի քանի երկրներ` շրջագայության:

# Անվճար դասընթաց Կիեւում` պրոդյուսերների եւ ռեժիսորների համար

**Հոկտեմբերի 21-ից 25-ը, Ուկրաինայի Կիեւ քաղաքում Ռեժիսորներ առանց սահմանների (ՌԱՍ) ծրագիրը կիրականացնի պրոդյուսերների համար նախատեսված աշխատաժողով: Աշխատաժողովը կկենտրոնանա խաղարկային ֆիլմերի արտադրության հետ կապված ստեղծագործական, ֆինանսական եւ իրավական հարցերի վրա: Նպատակն է տրամադրել սկսնակ պրոդյուսերներին եւ ռեժիսորներին այն հիմնարար գործիքները, որոնք կօգնեն նրանց արտադրել տեղական ֆիլմեր` ավելի որակյալ եւ մրցունակ համաշխարհային կինոյի շուկայում: Պրոդյուսերների աշխատաժողովը ՌԱՍ ծրագրի մի մասն է, որը հովանավորվում է Եվրոմիության կողմից Արեւելյան գործընկերության մշակութային ծրագրի միջոցով եւ իրականացվում է «Ոսկե ծիրան» կինոյի զարգացման հիմնադրամի եւ իր գործընկերների` MAIA (Իտալիա), INTERNEWS (Ուկրաինա), Պրոմեթեւս կինոարվեստի կենտրոն (Վրաստան) եւ Մեդիա նախաձեռնությունների կենտրոն (Հայաստան) կողմից: Աշխատաժողովը տեղի կունենա Կիեւի MOLODIST 43-րդ միջազգային կինոփառատոնի ընթացքում (2013 թ. հոկտեմբերի 19-27), եւ մասնակիցները կունենան իրավունք եւ հնարավորություն մասնակցելու ֆիլմերի ցուցադրություններին:**

**Ինչպես նշված է մամուլի հաղորդագրությունում, պրոդյուսերների աշխատաժողովը ներածական մակարդակի դասընթաց չէ: Մասնակիցները պետք է նախապես ծանոթ լինեն կինոարտադրության հիմունքներին: Փոխարենը, աշխատաժողովը կենտրոնացած կլինի մասնակիցների հմտությունների ու գիտելիքների ամրապնդման վրա խաղարկային կինոյի պրոդյուսինգի երկու ուղղություններով պրոդյուսերի դերը կինոարտադրության ստեղծագործական ոլորտում եւ պրոդյուսինգի ֆինանսական ասպեկտները:**

**Աշխատաժողովը բաղկացած կլինի դասախոսություններից, դեպքերի վերլուծություններից, խմբային աշխատանքներից եւ անհատական հանդիպումներից:**

**Ի դեպ, աշխատաժողովի ընթացքում աշխատանքային լեզուն անգլերենն է,**

**Հատկանշական է, որ աշխատաժողովին մասնակցությունն անվճար է, այդ թվում հյուրանոցը, սնունդը եւ տեղափոխությունը Արեւելյան գործընկերության համապատասխան երկրից Ուկրաինա եւ հակառակ ուղղությամբ:**

**Թեկնածուները կընտրվեն մրցութային կարգով` www.dabhub.com կայքում գրանցվելուց հետո:**

**Դիմումների ներկայացման վերջնաժամկետը 2013թ. սեպտեմբերի 15-ն է:**

Ս. Հ.

# Մարզական

## Իտալիան եւ Հոլանդիան աշխարհի առաջնության մասնակիցներ

Ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի եվրոպական գոտում կայացած մրցախաղերից հետո հայտնի դարձան Եվրոպայից եզրափակիչ փուլի ուղեգիր նվաճած առաջին 2 հավաքականները: Աշխարհի առաջնությունում իրենց մասնակցությունն ապահովեցին Իտալիայի եւ Հոլանդիայի հավաքականները:

Իտալացիները B խմբում սեփական հարկի տակ 2-1 հաշվով հաղթեցին չեխերին եւ 20 միավորով անհասանելի դարձան մրցակիցների համար: Ի դեպ, այդ խաղից հետո չեխերի գլխավոր մարզիչ Միխալ Բիլեկը հրաժարական տվեց՝ հայտարարելով, որ չի կատարել իր առջեւ դրված խնդիրը: Բիլեկը Չեխիայի հավաքականը գլխավորում էր վերջին 4 տարիներին:



B խմբում 2-րդ տեղի համար պայքարը կշարունակեն Բուլղարիայի եւ Դանիայի հավաքականները: Բուլղարացիները Մալթայում 2-1 հաշվով հաղթելով տանտերերին, վաստակեցին 13 միավոր: Դանիան 1 միավոր պակաս ունի: Հոկտեմբերի 11-ին Բուլղարիան հյուրընկալվելու է Երեւանում, իսկ 4 օր անց սեփական հարկի տակ մրցելու է չեխերի հետ: Դանիայի ընտրանին իտալացիներին եւ Մալթայի հավաքականին ընդունելու է սեփական հարկի տակ: Իսկ ՀՀ հավաքականը կորցրեց 2-րդ տեղի համար պայքարը շարունակելու վերջին հնարավորությունը:

Աշխարհի առաջնության 2-րդ մասնակիցը որոշվեց Անդորրայում, որտեղ հոլանդացիները 2 անպատասխան գնդակ խփեցին դաշտի տերերի դարպասը: Հոլանդիայի հավաքականը հիանալի ցուցանիշ ունի՝ 8 խաղում 22 միավոր:

2-րդ տեղի համար պայքարում առայժմ առջեւում է Հունգարիայի հավաքականը, որը 5-1 հաշվով սեփական հարկի տակ ջախջախեց էստոնացիներին: Մյուս խաղում Ռումինիայի հավաքականը սեփական հարկի տակ 0-2 հաշվով պարտվեց թուրքերին:

A խմբում վերջնական հաջողությանը մոտ է Բելգիայի հավաքականը, որն ունի 22 միավոր: 2-րդ տեղում ընթացող խորվաթները վաստակել են 17 միավոր: Խմբում կայացած 2 հանդիպումներում գրանցվեցին այսպիսի արդյունքներ. Մակեդոնիա-Շոտլանդիա՝ 1-2, Ուելս-Սերբիա՝ 0-3:

C խմբում էլ Գերմանիայի հավաքականն է գործնականում ապահովել ուղեգիրը: Հերթական հաղթանակը տոնելով Ֆարերների նկատմամբ (3-0), գերմանացիները վաստակեցին 22 միավոր: 2-րդ տեղում ընթացող շվեդները հյուրընկալվելիս պարտության մատնելով ղազախներին (1-0), ունեն 17 միավոր: Ավստրիան 1-0 հաշվով հաղթելով իռլանդացիներին, վաստակեց 14 միավոր:

Մյուս խմբերում համառ պայքար է ծավալվել ուղեգրերի համար: G խմբում 19-ական միավորով առաջատարներն են Բոսնիայի եւ Հունաստանի հավաքականները, որոնք էլ կվիճարկեն ուղեգիրը: Հույները հաղթեցին լատվիացիներին (1-0), Բոսնիան պարտության մատնեց սլովակներին (2-1):

Ռուսաստանի հավաքականը Սանկտ Պետերբուրգում 3-1 հաշվով հաղթելով իսրայելցիներին, վաստակեց 18 միավոր ու շրջանցեց պորտուգալացիներին՝ գլխավորելով F խմբի մրցաշարային աղյուսակը: Այս խմբում անակնկալ մատուցեց Լյուքսեմբուրգի հավաքականը, որը 3-2 հաշվով հաղթեց Հս. Իռլանդիային: Լյուքսեմբուրգը 6 միավոր վաստակեց ու տեղափոխվեց 5-րդ հորիզոնական՝ հետնապահի տեղը զիջելով ադրբեջանցիներին: Իսկ հյուսիսիռլանդացիների 74-ամյա գլխավոր մարզիչ Ջովանի Տրապատոնին պաշտոնանկ արվեց:

H խմբում կայացած 2 առաջատարների՝ Ուկրաինայի եւ Անգլիայի հավաքականների մրցավեճում դարպասներն անառիկ մնացին: Դա միակ գոլազուրկ ոչ-ոքին էր ընտրական մրցաշարի 8-րդ տուրում: Անգլիան մեկ միավորով գերազանցում է ուկրաինացիներին՝ գլխավորելով աղյուսակը:

Տուրի մյուս հանդիպումներում գրանցվեցին այսպիսի արդյունքներ. Նորվեգիա-Շվեյցարիա՝ 0-2, Իսլանդիա-Ալբանիա՝ 2-1, Կիպրոս-Սլովենիա՝ 0-2, Սան Մարինո-Լեհաստան՝ 1-5, Բելառուս-Ֆրանսիա՝ 2-4, Վրաստան-Ֆինլանդիա՝ 0-1:

**Մրցաշարային աղյուսակ**

**B խումբ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Իտալիա | 8 | 6 | 2 | 0 | 15-5 | 20 |
| 2. Բուլղարիա | 8 | 3 | 4 | 1 | 13-6 | 13 |
| 3. Դանիա | 8 | 3 | 3 | 2 | 9-10 | 12 |
| 4. Չեխիա | 8 | 2 | 3 | 3 | 8-8 | 9 |
| 5. Հայաստան | 8 | 3 | 0 | 5 | 8-10 | 9 |
| 6. Մալթա | 8 | 1 | 0 | 7 | 4-18 | 3 |

## Մեսին ու թիմակիցները Բրազիլիայի ուղեգիր նվաճեցին

**Հյուսիսային եւ Հարավային Ամերիկայի ընտրական գոտում որոշվեցին 2014-ի աշխարհի առաջնության եզրափակիչ փուլի առաջին 3 մասնակիցները:**

**Հարավային Ամերիկայի ընտրական մրցաշարի ավարտից 2 տուր առաջ Արգենտինայի հավաքականն ապահովեց եզրափակիչի ուղեգիրը՝ հյուրընկալվելիս 5-2 հաշվով հաղթելով Պարագվայի ընտրանուն: Այդ խաղում Լիոնել Մեսին 2 անգամ հստակ իրացրեց 11 մ հարվածները՝ հավաքականում խփած գոլերի թիվը հասցնելով 37-ի: Նա շրջանցեց 36 գոլ խփած Էռնան Կրեսպոյին: Իսկ Արգենտինայի հավաքականի բոլոր տարիների լավագույն ռմբարկուն Գաբրիել Բատիստուտան է, որի հաշվին 56 գոլ է գրանցված:**

**Կայացած մյուս խաղերում գրանցվեցին այսպիսի արդյունքներ. Բոլիվիա-Էկվադոր՝ 1-1, Ուրուգվայ-Կոլումբիա՝ 2-0, Վենեսուելա-Պերու՝ 3-2:**

**Հյուսիսային Ամերիկայի ընտրական գոտում աշխարհի առաջնության ուղեգիր նվաճեցին ԱՄՆ-ի եւ Կոստա Ռիկայի հավաքականները: Ամերիկացիները 2-0 հաշվով հաղթեցին մեքսիկացիներին, իսկ Կոստա Ռիկայի հավաքականին Ճամայկայի հետ գրանցված ոչ-ոքին (1-1) էլ բավարար էր ուղեգրի նվաճման համար:**

## Բեքհեմի որդին կմարզվի «Արսենալի» ակադեմիայում

Լոնդոնի «Արսենալը» պայմանագիր է կնքել Դեւիդ Բեքհեմի 10-ամյա որդու՝ Ռոմեոյի հետ: Վերջինս անգլիական թիմի երկրպագու է եւ այժմ մարզվելու է ակումբի ֆուտբոլի ակադեմիայում:

Հատկանշական է, որ Դեւիդ Բեքհեմն իր ֆուտբոլային կարիերան սկսել էր 13 տարեկանում համեստ «Բրիմսդաուն Ռովերս» թիմում, հետո մեկ տարի անցկացրեց «Տոտենհեմի» ֆուտբոլային ակադեմիայում: 1989-ին Բեքհեմին նկատեցին «Մանչեսթր Յունայթեդի» մարզիչները եւ Դեւիդն իր կյանքի 14 տարիները նվիրեց հարազատ ակումբին:

### ՇԱԽՄԱՏ

## Ոչ-ոքի Արոնյան-Կառլսեն պարտիայում

**Սենթ Լուիսի շախմատի մրցաշարի 2-րդ տուրում Լեւոն Արոնյանը ոչ-ոքի խաղաց Մագնուս Կառլսենի հետ՝ վաստակելով առաջին կես միավորը: Մրցաշարի առաջատարը Հիկարու Նակամուրան է, որը հաղթելով Գասա Կամսկուն, վաստակեց 2 միավոր: Կառլսենն ունի 1,5 միավոր, իսկ Կամսկին առայժմ 2 պարտիաներում էլ պարտվել է: Հենց նա էլ 3-րդ տուրում կլինի Արոնյանի մրցակիցը:**

## Փաշիկյանը միանձնյա առաջատարն է

**Մարտունիում ընթացող շախմատի մրցաշարի 3-րդ տուրում առաջատարներից մեկը՝ Արման Փաշիկյանը շարունակեց հաղթարշավը՝ տոնելով 3-րդ անընդմեջ հաղթանակը Ռոբերտ Հովհաննիսյանի հետ պարտիայում: Իսկ ահա մյուս առաջատարը՝ Կարեն Գրիգորյանն առաջին պարտությունը կրեց՝ զիջելով Ավետիք Գրիգորյանին: Վերջինս առաջին միավորը վաստակեց:**



**2,5 միավորով Փաշիկյանին հետապնդում է բելառուս գրոսմայստեր Սերգեյ Ժիգալկոն, որն առավելության հասավ մրցաշարում առայժմ անհաջող հանդես եկող Զավեն Անդրեասյանի նկատմամբ: Զավենն արդեն 2-րդ պարտությունն է կրում: Նա 3 հնարավորից կես միավոր է վաստակել:**

**Կարեն Գրիգորյանն ու Յուրի Կուզուբովն ունեն 2-ական միավոր: Վերջինս պարտության մատնեց Դարիուշ Սվիերչին: Տուրի միակ ոչ-ոքին գրանցվեց Մարկուս Ռագերի եւ Իվան Պոպովի մրցախաղում:**

## Աշխարհի չեմպիոնուհին պարտությամբ մեկնարկեց

**Շախմատի կանանց աշխարհի չեմպիոնուհի Աննա Ուշենինան պարտությամբ սկսեց Հոու Յիֆանի հետ Թայչժոուում մեկնարկած աշխարհի առաջնության մրցամարտը: Սկզբնախաղում Ուշենինան որոշ առավելություն էր ստացել, սակայն շատ ժամանակ էր վատնել: Դա իրեն զգացնել տվեց: Ի վերջո, չինացի շախմատիստուհուն հաջողվեց օգտվել մրցակցուհու սխալներից եւ 41-րդ քայլում հաղթել: Այսօր կկայանա մրցամարտի 2-րդ պարտիան, որում Ուշենինան կխաղա սեւերով:**

## Թոմաս Բախը կգլխավորի ՄՕԿ-ը



**Գերմանացի Թոմաս Բախը Բուենոս Այրեսում կայացած ՄՕԿ-ի 125-րդ նստաշրջանում ընտրվել է Միջազգային օլիմպիական կոմիտեի նոր նախագահ: Այդ պայքարում նա գերազանցեց օլիմպիական չեմպիոն, նախկին անվանի ձողացատկորդ, ուկրաինացի Սերգեյ Բուբկային: Թոմաս Բախը դարձավ ՄՕԿ-ի 9-րդ նախագահը, որն այդ պաշտոնում փոխարինեց 12 տարի կազմակերպությունը գլխավորած Ժակ Ռոգեին: Բախն առաջիկա 8 տարիներին կգլխավորի ՄՕԿ-ը եւ պատիվ կունենա բացելու Սոչիի, Ռիո դե Ժանեյրոյի, Փխենչհանի եւ Տոկիոյի օլիմպիական խաղերը:**

**Թոմաս Բախն արդեն 20 տարուց ավելի ՄՕԿ-ի անդամ էր՝ հասնելով մինչեւ այդ կազմակերպության փոխնախագահի պաշտոնին: Նա նաեւ Գերմանիայի ԱՕԿ-ի նախագահն էր: Բախը հայտնի է որպես դոպինգի դեմ պայքարի ջատագով:**

## Գաբրիել Սարգսյանն իսպանական թիմի առաջատարն է

**Շախմատի օլիմպիական չեմպիոն Գաբրիել Սարգսյանը հաջող է հանդես գալիս Իսպանիայի թիմային առաջնությունում: Նա «Էքստրեմադուրա» թիմի առաջատարն է: Գաբրիելը 3 հնարավորից իր թիմին 2 միավոր է պարգեւել:**

**Առաջին տուրում «Էքստրեմադուրան» 2,5-3,5 հաշվով պարտվեց «Էգուիգոմային»: Գաբրիելն առաջին խաղատախտակի վրա հաշտություն կնքեց Լազարո Բրուզոնի հետ: 2-րդ տուրում Սարգսյանի թիմը նույնպիսի հաշվով զիջեց «Սեստաո Նատուրգասին»: Գաբրիելը հաղթեց Պերես Դոմինգուեսին: 3-րդ տուրում հայ շախմատիստը ոչ-ոքի խաղաց Էթիեն Բաքրոյի հետ, իսկ նրա թիմն առաջին մեկ միավորը վաստակեց՝ հաշտություն կնքելով «Խակե Տալդեայի» հետ:**

## Լավագույնը «Բավարիան» է

Եվրոպական ֆուտբոլային ակումբների ընկերակցությունը Մյունխենի «Բավարիային» ճանաչել է 2013-ի լավագույն թիմ: Հիշեցնենք, որ «Բավարիան» 2012/13-ի մրցաշրջանում նվաճել է չեմպիոնների գավաթը, դարձել է երկրի չեմպիոն ու գավաթակիր:

Իսկ ահա Գերմանիայի առաջնության 2-րդ մրցանակակիր եւ չեմպիոնների լիգայի եզրափակիչի մասնակից Դորտմունդի «Բորուսիան» ճանաչվել է ամենամեծ առաջընթաց ապրած թիմ:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# «ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններ եւ**
**Անկախ աուդիտորական եզրակացություն**
**«Ռումավա» ՍՊԸ**
**Սահմանափակ պատասխանատվությամբ Ընկերություն**
**31 դեկտեմբերի 2012 թ.**

*Պռոշյան 2/1, Երեւան 0019, Հայաստանի Հանրապետություն*
*Լիցենզիա/License N ԱՕ/ATS 072*
*իրավ. հասցե՝ Գր. Արծրունու 78/3 շ., բն. 47 Հեռ/Tel: (374 10) 229 238*

## Անկախ աուդիտորական եզրակացություն

***«Ռումավա» ՍՊԸ-ի մասնակիցներին,***

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ռումավա» ՍՊԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը եւ այլ պարզաբանող ծանոթագրություններ:

***Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվություն***

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետեւանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում եւ պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն եւ կիրառում, ինչպես նաեւ տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

***Աուդիտի պատասխանատվություն***

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների եւ բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետեւանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մեր համոզմամբ՝ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

***Կարծիք***

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2012 թ., դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի եւ նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ եւ իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

***04 սեպտեմբերի, 2013 թ.***

***Անիկ Մարտիրոսյան***
***Տնօրեն-բաժնետեր***

***Աննա Գրիգորյան***
***Աուդիտոր-բաժնետեր***

### Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծանոթ. | 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2011 թ. հունվարի 1-ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| Ակտիվներ | | | | |
| Ոչ ընթացիկ ակտիվներ | | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 483 | 782 | 7,163 |
| Ներդրումային գույք | 5 | 625,324 | 633,055 | 586,679 |
| Տրամադրված փոխառություններ | 6 | 1,113,951 | 1,125,461 | - |
| | | 1,739,758 | 1,759,298 | 593,842 |
| Ընթացիկ ակտիվներ | | | | |
| Պաշարներ | 7 | - | 100,740 | 101,087 |
| Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր | 8 | 17,466 | 25,115 | 1,751,269 |
| Կանխավճար շահութահարկի գծով | | 44,144 | 44,130 | - |
| Մնացորդներ դրամարկղում եւ բանկերում | 9 | 737 | 174 | 5,492 |
| | | 62,347 | 170,159 | 1,857,848 |
| Ընդամենը ակտիվներ | | 1,802,105 | 1,929,457 | 2,451,690 |
| Սեփական կապիտալ եւ պարտավորություններ | | | | |
| Կապիտալ եւ պահուստներ | | | | |
| Կանոնադրական կապիտալ | 10 | 587,450 | 587,450 | 587,450 |
| Կուտակված շահույթ | | 831,593 | 933,547 | 1,122,512 |
| | | 1,419,043 | 1,520,997 | 1,709,962 |
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 11 | 381,235 | 407,527 | 433,819 |
| | | 381,235 | 407,527 | 433,819 |
| Ընթացիկ պարտավորություններ | | | | |
| Կարճաժամկետ փոխառություններ | 12 | 1,296 | 296 | - |
| Առեւտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր | 13 | 531 | 637 | 174,479 |
| Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն | | - | - | 133,430 |
| | | 1,827 | 933 | 307,909 |
| Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ | | 1,802,105 | 1,929,457 | 2,451,690 |

*Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2013 թ. սեպտեմբերի 4-ին՝*

***ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆ***
***Տնօրեն***

***ՌՈՒԶԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***
***Գլխավոր հաշվապահ***

### Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծանոթ. | 2012 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2011 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|
| Հասույթ | 14 | 3,000 | 5,031 |
| Վաճառված ապրանքների ինքնարժեք | | - | (1,776) |
| Համախառն շահույթ | | 3,000 | 3.255 |
| Այլ եկամուտ | | 26,299 | 29,205 |
| Վարչական ծախսեր | 15 | (31,408) | (52,971) |
| Այլ ծախսեր | 16 | (101,493) | (5,375) |
| Գործառնական գործունեությունից վնաս | | (103,602) | (25,886) |
| Ֆինանսական եկամուտ/ծախս զուտ | 17 | 1,667 | (163,079) |
| Վնաս մինչեւ հարկերը | | (101,935) | (188,965) |
| Շահութահարկի գծով ծախս | 18 | (19) | - |
| Զուտ վնաս | | (101,954) | (188,965) |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | - | - |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | | (101,954) | (188,965) |

***ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆ***
***Տնօրեն***

***ՌՈՒԶԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***
***Գլխավոր հաշվապահ***

# «ՖԻՆՏԵԽ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններ եւ**
**Անկախ աուդիտորական եզրակացություն**
**«ԳՐԱՆԴ-ԱԿՈՒՄԲ»**
**Բաց Բաժնետիրական Ընկերություն**
**31 դեկտեմբերի 2012 թ.**

*Պռոշյան 2/1, Երեւան 0019, Հայաստանի Հանրապետություն*
*Լիցենզիա/License N ԱՕ/ATS 072*
*իրավ. հասցե՝ Գր. Արծրունու 78/3 շ., բն. 47 Հեռ/Tel: (374 10) 229 238*

## Անկախ աուդիտորական եզրակացություն

***«Գրանդ-Ակումբ» ԲԲԸ-ի բաժնետիրոջը,***

Մենք աուդիտի ենք ենթարկել «Գրանդ-Ակումբ» ԲԲԸ (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը եւ այլ պարզաբանող ծանոթագրություններ:

***Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվություն***

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետեւանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում եւ պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն եւ կիրառում, ինչպես նաեւ տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

***Աուդիտորի պատասխանատվություն***

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների եւ բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետեւանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու եւ արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մեր համոզմամբ՝ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

***Կարծիք***

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի եւ նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ եւ իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

**Հանգամանքի շարադրում**

Առանց ստորեւ ներկայացված հարցերի վերաբերյալ վերապահումներ կատարելու, ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքին, որ Ընկերության ընթացիկ պարտավորությունները ավելի մեծ են, քան ընթացիկ ակտիվները: Այս փաստի առկայությունը կասկածներ է առաջացնում Ընկերության անընդհատ գործելու վերաբերյալ: Սակայն հաշվի առնելով Ընկերության գործունեության զարգացման ծրագիրը, ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունը կկարողանա ապահովել իր շարունակական գործունեությունը:

***04 սեպտեմբերի, 2013 թ.***

***Անիկ Մարտիրոսյան***
***Տնօրեն-բաժնետեր***

***Աննա Գրիգորյան***
***Աուդիտոր-բաժնետեր***

### Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծանոթ. | 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2011 թ. հունվարի 1-ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| Ակտիվներ | | | | |
| Ոչ ընթացիկ ակտիվներ | | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 950,141 | 842,430 | 848,576 |
| Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ | 5 | - | 25,000 | 25,000 |
| | | 950,141 | 867,430 | 873,576 |
| Ընթացիկ ակտիվներ | | | | |
| Պաշարներ | 6 | 28,330 | 469 | 469 |
| Առեւտրային եւ այլ դեբիտորական պարտքեր | 7 | 37,179 | 2,553 | 2,717 |
| Կանխավճար շահութահարկի գծով | | 6,229 | 6,229 | 6,229 |
| Մնացորդներ դրամարկղում եւ բանկերում | 8 | 7,048 | 7,504 | 7,951 |
| | | 78,786 | 16,755 | 17,366 |
| Ընդամենը ակտիվներ | | 1,028,927 | 884,185 | 890,942 |
| Սեփական կապիտալ եւ պարտավորություններ | | | | |
| Կապիտալ եւ պահուստներ | | | | |
| Կանոնադրական կապիտալ | 9 | 17,015 | 17,015 | 17,015 |
| Կուտակված շահույթ | | 32,598 | 54,777 | 46,863 |
| | | 49,613 | 71,792 | 63,878 |
| Ոչ ընթացիկ պարտավորություններ | | | | |
| Ակտիվներին վերաբերող շնորհներ | 10 | 549,118 | 588,341 | 627,564 |
| Փոխառություններ | 11 | - | 222,347 | 198,025 |
| | | 549,118 | 810,688 | 825,589 |
| Ընթացիկ պարտավորություններ | | | | |
| Փոխառություններ | 11 | 414,083 | - | - |
| Առեւտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր | 12 | 16,113 | 1,705 | 1,475 |
| | | 430,196 | 1,705 | 1,475 |
| Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ | | 1,028,927 | 884,185 | 890,942 |

*Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2013 թ. սեպտեմբերի 4-ին՝*

***Տնօրեն***
***Սամվել Սահակյան***

***Գլխավոր հաշվապահ***
***Ռուզաննա***
***Հովհաննիսյան***

### Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

| Հազար դրամ | Ծանոթ. | 2012 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի | 2011 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի |
|---|---|---|---|
| Ապրանքների իրացումից հասույթ | | - | - |
| Վաճառված ապրանքների ինքնարժեք | | - | - |
| Համախառն շահույթ | | - | - |
| Այլ եկամուտ | | 39,238 | 39,241 |
| Վարչական ծախսեր | 13 | (36,306) | (31,327) |
| Այլ ծախսեր | | (25,000) | - |
| Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս) | | (22068) | 7,914 |
| Այլ ֆինանսական հոդվածներ | 14 | (111) | - |
| Շահույթ/(վնաս) մինչեւ հարկերը | | (22,179) | 7,914 |
| Շահութահարկի գծով ծախս | 15 | - | - |
| Տարվա շահույթ/(վնաս) | | (22,179) | 7,914 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ | | | - |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | | (22,179) | 7,914 |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ/(վնաս) դրամ | 16 | (540,951) | 193,024 |

***Տնօրեն***
***Սամվել***
***Սահակյան***

***Գլխավոր հաշվապահ***
***Ռուզաննա***
***Հովհաննիսյան***

**ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ԹԱՓՈՒՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ՀԱՄԱՐ**

Համալսարանի **գիտական գրադարանի պատմական գրականության ընթերցասրահի** ավագ գրադարանավարի տեղի համար հետեւյալ գործառույթներով եւ հմտություններով.

▼ Գրադարանային մասնագիտական կամ պատմաբանի մասնագիտական կրթություն

▼ տիրապետել համակարգչային գիտելիքների եւ առնվազն մեկ օտար լեզվի

▼ Հաղորդակցության կարողություններ

Հավակնորդները անձնակազմի հաշվառման բաժին են ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

- Դիմում ռեկտորի անունով.
- Ինքնակենսագրություն.
- Կրթությունը հավաստող փաստաթղթերի պատճենները.
- Անձնագրի պատճենը.
- Լուսանկար 1 հատ.
- Աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ մինչեւ ս.թ. սեպտեմբերի 20-ը:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել անձնակազմի հաշվառման բաժին

հասցեն՝ ք. Երեւան, Տիգրան Մեծի 17, 200 սենյակ,
հեռ՝ 59-70-84:

## Կորել է

Արաֆիկ Արտաշի Գեւորգյանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի ֆակուլտետի դիպլոմը՝ տրված 1981 թ.-ին:

Համարել անվավեր:

www.azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 11.9.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: